

442




Ֆ. ԵՆԳԵԼԸ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՒՏՈՊԻԱՅԻՑ
ԴԵՊԻ ԴԻՏՈՒԹՅՈՒՆ

*

3/173
U-78

ԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1940



13 MAY 2005

ԱՅՀ
U-78

Գրութարմեր բոլոր յերկրների, պատճեն

NOV 2005

Ֆ. ԵՆԳԵԼՍ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՈՒՏՈՂԻԱՅԻՑ ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Հաֆարդի կառարած թարգմանության անսպասելի հաջողությանը Փրանսերեն խոսող յերկրներում, և հատկապես հենց ֆրանսիայում, իմ առաջ այն հարցը դրեց, թե արդյոք նպատակահարմար չի լինի նմանապես այդ յերեք զլուխների առանձին գերմաններեն հրատարակությունը։ Յեկ առաջ Ցյուրիխի «Սոցիալ-դեմոկրատի»¹ խմբագրությունն ինձ հաղորդեց, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերում պրոպագանդիստական նոր բրոցյուրների մեջ պահանջ է նկատվում, և ինձնից հարցրեց, թե արդյոք յես չեմ համաձայնվի, վորպեսզի այդ նպատակով հրատարակվեն մատնանշված յերեք զլուխները։ Յես, իհարկե, տվի իմ համաձայնությունը խմբագրությանը և նրա տրամադրության տակ դրի իմ աշխատությունը։

Բայց չե՞ վոր սկզբով այդ բրոցյուրը ամեննեին ել դրված չեր մասսաների մեջ անմիջական պրոպագանդ անելու համար։ Կարո՞ղ եր արդյոք դրա համար պիտանի լինել մի, բոտ եյության զուտ գիտական, աշխատություն։ Ինչպիսի՞ վտակություններ են անհրաժեշտ ըստ ձեւի և բովանդակության։

Ինչ վերաբերում ե ձեւին, ապա միայն ոտարագդի բառերի առատությունը կարող եր կասկած հարուցել։ Բայց արդեն կասալն իր ճառերում ու պրոպագանդիստական բրոցյուրներում այնքան ել չեր խուսափում ոտարագդի բառեր գործածելուց, և, վորքան ինձ հայտնի յե, դրա դեմ առանձնապես չեյին ել դըժգուհում։ Իսկ այդ ժամանակից սկսած մեր բանվորներն ե'լ այլեւ մի յեռանդով և ամելի կանոնավոր կերպով են լրագրեր կարդում և դրա չնորհիլ ամելի յեն յուրացեր ոտարագդի բառերը։ Յես նրանով սահմանափակվեցի, վոր հանեցի վոչ անպայման անհրաժեշտ բոլոր ոտարագդի բառերը։ Բայց, թողնելով անհրաժեշտները, յես հրաժարվեցի նրանց այսպես կոչված բացատրական թարգմանություններ կցելուց։ Զե՞ վոր անհրաժեշտ ոտարագդի բառերը, վորոնք մեծ մասամբ ամենքի կողմից ընդունված գիտական-տեխնիկական տերմիններ են, անհրաժեշտ չեյին ել լինի, յեթե նրանց թարգմանությունը հնարավոր լիներ։ Ուրեմն, թարգմանությունը միայն աղավաղում ե իմ մասաը։ բա-

¹ «Սոցիալ-դեմոկրատ» — գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական պեղանը, վոր 1879-ից մինչև 1888 թ. հրատարակվում եր Շվեյցարիայում, Յուրիխում, իսկ վերջին յերկու տարին (1889—1890) — կ. ունդունում։ Գերմանիայում սոցիալիստների գեմ բացառիկ սրբնիք գործողության ժամանակիշղությամբ (1878—1890) սոցիալ-դեմոկրատական հրատարակություններն արգելված ելին։

շատրելու վորեարեն նա շփոթություն և մտցնում։ Բանալոր բացարություններն այդպիսի դեպքում անհամեմատ ավելի յեն ոդնում։

Իսկ ինչ վերաբերում ե բովանդակությանը, ապա յես համարձակվում եմ պնդել, վոր նա գերմանական բանվորների համար քիչ գժվարություններ և ներկայացնում։ Առհասարակ դըժվար և միայն յերրորդ հատվածը, ընդուրություններ և ներկայացնում այն բանվորների համար, վորոնց կյանքի ընդհանուր պայմաններն այդ համաձնընդուրկում ե, քան «կրթված» բուրժուաների համար։ Բազմաթիվ պարզաբանումներ ու լրացրածներ անելով՝ յես իսկապես թիվ պարզաբանումների ունենալու վոչ այնքան բանվորներին, վորքան «կրթված» ընթերցողներին, այնպիսի մարդկանց, ինչպես պատգամավոր պարոն Փոն-Սյոն-Սյոներնին, պարոն գաղտնի խորհրդական Հայնրիխ Փոն-Զիբելին և ուրիշ Տրայչկեներին, վորոնց մարմինը սաստիկ յեռ գալիս շարունակ նորից ու նորից ցույց տալու իրենց անհրեշտայելի գործությունը և դրանից բախող՝ սոցիալիզմի ապշեցուցիչ անհասկացողությունը։ Յեթե Դոն-Բիշոպն ուղղում է ցուցիչ անհասկացողությունը։ Յեթե Դոն-Բիշոպն ուղղում է անհասկացողությունը։

Այդպիսի ընթերցողները, հավանութեան, նաև կղարմանան, սուցիալիզմի զարգացման համառոտ ուրագալծում հանդիպելով կանունական ապահովագությունը² ուսմունքին տիեզերքի ծագման մասին, Ժամանակակից բնադիտությանն ու Դարմինին, գերմանական կլասիկ գիտական սոցիալիզմին ու Զեբելին։ Մակայն բանն այն ե, վոր գիտական սոցիալիզմին իրենից ներկայացնում ե գերմանական պրոլետեատ և կարող եր ծագել միայն մի ժողովրդի մեջ, վորի կլասիկ գիտական սոցիալիզմին ու Զեբելին։

1 Զիբել և Տրայչկե-գերմանական սեակցիոն բուրժուանկան պատմաբաններ։ Խմբ։

2 Գոն-Բիշոպը Սերվանտեսի (XVI դար) նույնանուն յերգիծարանական վեպի գլխավոր հերօսն ե։ Հեղինակը հանձին Դոն-Բիշոպի ծագրում ե միջնադարյան ասպետությունը։ Սամշո-Պամչոն Դոն-Բիշոպի զինակիրն ե։ Խմբ։

3 Գերմանացի գիտական կանուն (1724—1804) 1755 թ. այն հիպոթեզը (գիտական յենթագրությունը) արտահայտեց, թե արեգակնային սիստեմը ծառագել և շիկացած պտավող մշուշաղանդվածներից։ Այդ հիպոթեզը հետադարյաւ գործությունը ու գիմնավորեց Փրանսիացի մաթեմատիկոս և ասողաբաշխ Լապլաս (1749—1827)։ Խմբ։

դիմակելու կայլ տրավելիցին, Գերմանիայում ։ Պատմության մատերիալիստական ըմբռնումը և նրա հատուկ կիրառումը պրո-լետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցող արգի դասա-կարգային պայքարի նկատմամբ հնարյալոր դարձավ միայն դիմա-լեկտիկայի ողնությամբ։ Յեզ յեթե գերմանական բուրժուազիա-յի գպրոցական ուսուցիչները գերմանական մեծ վիլիսովիաների հիշատակը և նրանց ստեղծած դիմակետիկան խեղդեցին անմիտի-քարական եկեղեկտիզմի ճահճի մեջ,—այն աստիճան, վոր մենք պետք են վկայակոչենք ժամանակակից բնակիտությունը՝ ապացու-ցելու համար, վոր դիմակետիկան գոյություն ունի իրականության մեջ,—ապա մենք, գերմանացի սոցիալիստներս, պարծենում ենք նրանով, վոր ծագում ենք վո՞չ միայն Սեն-Սիմոնից, Ֆուլյեյից և Ռուենից, այլ նաև Կանտից, Ֆիլիսոտելից ու Հեղեղից։

Հոնդրա, 21 սեպտեմբերի 1882 թ.:

¹ 1892 ԹՎԻ ԱՆԴԼԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ 1

Առաջարկվող բրոցյուրն սկզբում մի ավելի ընդարձակ ամ-
բողջության մասն է յեղել: 1875 թ. մոտերքը Բեռլինի համալ-
սարանի պրիվատ-դոցենտ գ-ր Ոյլ, Դյուրինդը հանկարծակի և
բավական աղմուկով հայտարարեց, վոր նա սկսել է հայատալ
սոցիալիզմին, և գերմանական հասարակությանը հրամցրեց վո՛չ
միայն մանրամասն սոցիալիստական թեորիա, այլև հասարակու-
թյան վերակառուցման մանրամասնորեն մշակված գործնական
պլան: Ինքնին հասկանալի յե, նա ամբողջ ուժով հարճակվեց
իր նախորդների վրա. ամենից շատ տուժեց Մաքքար, վորէ վրա
յեր թափում նա իր դայլութիւն ամբողջ բաժան:

Այդ տեղի ունեցավ ճիշտ այն ժամանակ, յերբ դեռ ոսր որ
կատարվել Գերմանիայում սոցիալիստական կուսակցության յեր-
կու մասերի—այդենախականների և լասալականների միացումը,
և կուսակցությունն այդպիսով վո՛չ միայն չափազանց ուժեղա-
ցել եր, այլև—վոր ե'լ ավելի կարելոր և հնարավորություն եր
ստացել իր ուժերն ընդհանուր թշնամու գեմ ուղղելու։ Սոցիա-
լիստական կուսակցությունը Գերմանիայում արագ կերպով ուժ
եր դառնում։ Բայց նրան ուժ դարձնելու համար ամենից առաջ
անհրաժեշտ եր վտանգի չենթարկել նորից նվաճված միանու-
թյունը։ Մինչդեռ դ-ր Դյուրինդը բացահայտ կերպով սկսեց իր
շուրջն ստեղծել աղանդ, ապագա ինքնուրույն կուսակցության
կորիզը։ Դրա համար ել մենք կամա-ակամա հարկադրված եյինք
բարձրացնելու մեղ նետված ձեռնոցը և մարտի բննվելու։

¹ Այսակա ժենք տպում ենք միայն «Սոցիալիզմի զարդարումը» բրոշյուրի անդամներին ներածության մի փոքր մասը՝ առաջին յերեք էջը։ Ամբողջ ներածությունը, միայն առանց այդ յերեք էջի, ինքը՝ Ենգելսը տպել եւ կերպածությունը, «Neue Zeit» ժուռնալում, գրապես ինքնուրույն հոգևած «Պատմական ներեն» ժամանքի վերնարպով։ Նույն այդ վերնարպով եւ նա լույս եւ ընծայվել ԽՍՏԵ-ի կողմից առանձին բրոշյուրով։ ԽՄԲ։

1 «Գերբանիայում»—զբավիրապակ է : Պետք է առել—զերբանացիների մեջ՝ Քանի վար ինչքան, մի կողմից, զիտական սոցիալիզմի ծաղման համար անհրաժեշտ եր զերբանական գիտական կազմական, այնքան եւ, մյուս կողմից, անհրաժեշտ ելին Անդրեայի ու Ֆրանսիայի տնտեսական ու քաղաքական զարդարացած պայմանները : Գերբանիայի հետամնաց, քառանական թվականների սկզբին եւ ավելի մեծ չափով, քան այժմ, —տնտեսական ու քաղաքական պայմանները լավագույն դեպքում կարող ելին առաջ բերել միայն սոցիալիզմի ծաղրանկանը (Հմտ. «Կոմունիստական մանիֆեստ», III, 1—«Գերբանական կամ ճշմարիտ սոցիալիզմ») : Միայն այն ժամանակ, յերբ Անդրեայում ու Ֆրանսիայում ստեղծված տնտեսական ու քաղաքական սիտուացիան զերբանական գիտական գիտական քննադատության յենթարկելոց, կարելի յեր իրական արդյունքների համեմ : Այդ տեսակետից, հետևապես, զիտական սոցիալիզմը վո՞չ թէ բացառապես զերբանական, այլ վոչ պակաս չափով նաև միջազգային պրոցուր է : (Նովելի ծանոթագրությունը, վոր նա արել ե զիրքը տպագրվելուց հետո, առաջին իրատարակության մեջ : Դամոքագրությունը պարզ է վերջին եղում) :

Սակայն այդ թեև վոչ շատ գժվարին, բայց մի իսկառիւս ձգձգուն դործ եր: Լավ հայտնի յե, վոր մեզ՝ գերմանացիներիս հատուկ ե մի սարսափելի ծանրակշիռ «Gründlichkeit» (հիմնավորություն) — արմատական խորություն կամ խոր արմատականություն, անվանեցեք՝ ինչպես կուղեք: Յերբ մեզնից վորմե մեկն սկսում ե շարադրել այն, ինչ վոր, նրա կարծիքով, նոր թեորիա յե, նա անհրաժեշտ ե համարում ամենից առաջ մշակել այդ վորպես մի համայնապարփակ սիստեմ: Նա պետք է ապացուցի, վոր տրամաբանության սկզբունքները և տիեզերքի հիմնական որենքները հավիտենից գոյություն են ունեցել միայն նրա համար, վորպեսզի բերեն-հասցնեն հենց այդ նոր և ամեն ինչ ալարտող թեորիային: Յեվ այդ տեսակետից դուք Դյուրինդը լիովին իր աղջության բարձրության վրա յե յեղել: Վոչ ավելի, վոչ պակաս, քան մի լրիվ՝ ռացիոնալ, բարոյադիտական, բնադիտական և պատմական «Փիլիսոփայության սիստեմ», մի լրիվ՝ «Քաղաքանականության ու սոցիալիզմի սիստեմ» և, վերջապես, «Քաղաքատնտեսության քննադատական պատմություն» — յերեք հաստափոր հատուներ, քառածալ թերթի ծավալով, վորոնք ծանր են ինչպես քաշով, այնպես ել բովանդակությամբ, նաև որդ վիլսոփաների դեմ և տնտեսագետների դեմ ընդհանրապես ու Մարքսի դեմ մասնավորապես մորիլիզմացիայի յենթարկված ապացույցների յերեք զորաբանակ, իսկապես վոր «Գիտության մեջ» կատարյալ «Հեղաշրջում» կատարելու մի փորձ. ահա թե ինչ հետ յես պետք ե զործ ունենայի: Յես հարկադրված եյի քննախոսելու ամեն տեսակ, ամենաբազմազան առարկաների մասին — ժամանակի ու տարածության կոնցեպցիաներից մինչև բեմատալիզմ, նյութի ու շարժման հավիտենականությունից մինչև բարոյական դաղափարների փոփոխական բնույթը, դարվինյան բնական ընտրանքից մինչև յերիտասարդության դաստիարակությունը ապատիարակությունը ապագա հասարակության մեջ: Համենայն դեպս, իմ հակառակորդի ամենասպարփակ դիապազոնը ինձ առիթ ավեց նրա հետ ունեցած բանավեճի ժամանակի շարադրելու Մարքսի և իմ հայացքներն այդ բոլոր բազմազան առարկաների մասին, և այն ել՝ շատ ավելի կապակցված ձևով, քան այդ յերթերից արել եյինք: Հենց այս եր զվարապոր պատճառը, վոր յես ստանձնեցի այդ, ուրիշ պայմաններում անչնորդակալ, ինդիրը:

Իմ պատմախանը նախ լույս տեսավ մի շարք հոգվածների ձեռվ Լայլցիդի «Vorwärts»-ում, սոցիալիստական կուսակցության կենտրոնական որդանում, իսկ հետո — «Գիտության մեջ» պ. Ոյ-

գեն Դյուրինդի կատարած «Եղաշրջումը» գրքի ձևով, վորի յերկորդ հրատարակությունը լույս տեսավ Ծյուրիխում 1886 թվին:

Իմ բարեկամ, այժմ Փրանսական պալատում Լիլի պատգամավոր Պոլ Լաֆարդի խնդիրքով, այդ գրքի յերեք դլուխներից յես կազմեցի մի բրոցուր, վորը նա թարգմանեց և հրատարակեց 1880 թ. «Ուսուական սոցիալիզմ և դիտական սոցիալիզմ» անունով: Այդ Փրանսերեն տեքստը կազմեց լեհերեն և իսպաներեն հրատարակությունների հիմքը: 1883 թ. մեր գերմանական բարեկամները հրատարակեցին այդ բրոցուրն այն լեզվով, վորով նա սկզբում դրված եր: Հետո այդ գերմանիներն ընտարիցից կատարվեցին իտալերեն, ուսւահերեն, գուանդերեն և ուումիներեն թարգմանությունները: Այսպիսով, հաջած նաև այս անդիներն հրատարակությունը, այս բրոցուրը տարածված է տասը լեզուներով: Կարծում եմ, վոր վոչ մի սոցիալիստական յերկ, չբացառելով նույնինկ մեր «Կոմունիստական մանիֆեստը», յերկ, չբացառելով անդամ հրատարակված և 1848 թ., և Մարքսի «Կապիտալը», այսքան անդամ չի թարգմանվել: Գերմանիայում բրոցուրը չորս հրատարակություն ունեցավ, մոտ 20.000 որինակ ընդհանուր տիբաժով:

Հետադայում գործածվող տնտեսագիտական տեքմինները, վորչոփով նրանք նոր են, զուգադիպում են Մարքսի «Կապիտալի» անդիներն հրատարակության տերմինոլոգիայի հետ: Ապրանքային արտադրություն» ասելով՝ մենք հասկանում ենք տընտեսական զարգացման այն աստիճանը, յերբ առարկաներն արտադրությունը են վո՞չ միայն արտադրողների պահանջները բավարարելու համար, այլ նաև փոխանակության նարատակով, այսինքն՝ արտադրությունը են վորպես ապրանքներ, և վոչ թե սպառողական արժեքները: Այդ աստիճանը գոյություն ունի այն ժամանակից, յերբ սկզբի ե արտադրությունը փոխանակության համար, և կիզ մինչև մեր ժամանակը. իր զարգացման գաղաթնակետին և հասնում այդ աստիճանը միայն կապիտալիստական արտադրության ժամանակ, այսինքն՝ այն պայմաններում, յերբ կապիտալիստը, արտադրության միջոցների սեփականատերը, փողով վարձում և բանվորներ, մարդկանց, վորոնք զուրկ են վորով վարձում և առաջարկանց, վարդուց կազմության վորեւ միջոցից, բացի իրենց սեփական աշխատադրության վորեւ միջոցից, և իր գրպանն է դնում պրոդակտների վարձուքային ուժից, և իր գրպանն է դնում պրոդակտների վարձուքի գնի ավելցուկը՝ իր ծախքերը գուրս գալուց հետո: Արձագի գնի ավելցուկը՝ իր ծախքերը գուրս գալուց հետո:

գործերից, մենք բաժանում ենք յերեք շրջանի—1) արհեստի աերապետություն, մանր արհեստավոր-վարպետների և նրանց սակալաթիվ յենթավարպետների ու աշկերտների գարաշըան; յերբ ամեն մի աշխատող ամբողջ առարկան է արտադրում. 2) մանուֆակտուրա, յերբ մեկ ընդարձակ գործանոցում հայաք-ված ավելի խոշոր թվով բանվորներ արտադրում են ամբողջ առարկան աշխատանքի բաժանման կարգով, այսինքն՝ ամեն մի բանվոր կատարում է վորեւ մեկ ժամանակի ողերացիա, այնպիս վոր ոլրուգուկուր պատրաստ է միայն նրանից հետո, յերբ նա հաջորդաբար անցել է նրանց բոլորի ձեռքով. 3) ժամանակակից արդյունաբերություն, վորի ժամանակ պրոդուկտն արտադրում են վորեւ ուժով շարժվող մեքենաները, իսկ բանվորի դերը առհմանսավակվում է մեքենայական ֆակտորի գործողություններին հակելով և այդ գործողությունները կարգավորելով։

ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՒՏՈՂԻԱՅԻՑ ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

I

Արդի սոցիալիզմն իր բովանդակությամբ ամենից առաջ՝ մեկաղմից, ունկորների ու չունկորների, կապիտալիստների ու վարձու բանվորների՝ արդի հասարակության մեջ իշխող փոխութարձ դասակարգային հակադրությունների եյտթյունը, իսկ մյուս կողմից, արտադրության մեջ տիրող անարխիայի եյտթյունն ըմբռնելու արդյունք է: Բայց իր թեորիական ձևով այդ սոցիալիզմը յերևան և գալիս սկզբում միայն վորպես XVIII դարի մեծ լուսալորիչների¹ առաջարած սկզբունքների հետագա և կարծի ավելի հետեւողական զարդացում։ Ինչպիս ամեն մի նոր թեորիա, սոցիալիզմը պետք է յելներ նրանից առաջ կուտակված իդեալական մատերիալից, թեև նրա արմատները նյութական տնտեսական վաստերի մեջ եյին դժկվում։

Այն մեծ մարդիկ, վորոնք Ֆրանսիայում լուսավորում եյին գլուխները մուտեցող հեղափոխության համար, իրենք հանդես եյին գալիս ծայրահեղ հեղափոխականորեն։ Վոչ մի արտաքին հեղինակություն նրանք չեյին ճանաչում։ Կրոնը, բնության վերաբերյալ հայցքները, հասարակությունը, պետական կարգը՝ ամեն ինչ նրանք անխնա քննադատության եյին յենթարկում, ամեն ինչ բանականության դատարանի առաջ եր կանչընում և անհետացման եր վատապարտում, յեթե չեր կարողանում իր բանական լինելը (разумность) ապացուցել։ Բանականությունը դարձավ գոյություն ունեցող ամեն բանի միակ չափանիշը։ Այդ այն ժամանակ եր, յերբ չեղելի արտահայտությամբ, «աիե-

¹ Խոսքը վերաբերում է Փրանսական բուրժուազիայի ներկայացուցիչներին Փիլիպոսիայության ու գիտության մեջ 1789—1794 թ. թ. Փրանսական բուրժուազիան հեղափոխության նախորդը։ Ամենաականավոր ներկայացուցիչներն եյին Վոլտերը, Ռուսոն, ևնցիկլոպեգիստները Դիլեռյի գլուխությամբ և ուրիշներ։ Խմբ։

զերքը զվարվայր գլուխցաւ, այսինքն՝ յերբ մարդու զլուխն ու նրա մտածովության ողնությամբ հայտնազործված դրույթները պատճենած առաջադրեցին բոլոր մարդկային գործողությունների ու հասարակական հարաբերությունների միակ հիմքը ծառայելու, և յերբ գրանից հետո այդ դրույթներին հակասող իրավականությունը փաստորեն զվարվայր չըլվեց։ Հասորակության ու պետության բոլոր նախկին ձևերը, բոլոր տրատիցիոն պատկերացումներն անբանական համարվեցին և դեռ նետվեցին վորպես հնոտի։ աշխարհը մինչև այժմ միայն նախատաշարմունքներով եր դեկավարվել, և նրա ամբողջ անցյալը միայն կարեկցության ու արհամարհների յև արժանին։ Այժմ առաջին անգամ ծաղեց արելը, վրա հասալ բանականության թագավորությունը, և այդ ժամանակից սկսած մահավատությունն ու անարդարությունը, արտօնություններն ու նշանակությունը առաջ պիտի զիջեն հավիտենական ճշմարտությանը, հավիտենական արդարությանը, բնության որենքներից բղիսդ հավատարությանը և մարդու անկազմելի իրավականերին։

Այժմ մենք դիտենք, վար բանականության այդ թագավորությունը մոչ այլ ինչ եր, բայց յեթե բուրժուազիայի իդեալականացված թագավորությունը, վոր հայիշտենական արդարությունն իրառութելեց բուրժուական արդարադատության ձևով, վոր հա-

۱ پیش پنجه هیچ که مانند گزندلر فرم انسانیکاران گزندلاییمپولیتیکان داشتند.
«برای اینکه بگوییم که اینهاست، لازم است گذشتیم که در آنها مشاهده شوند که
آنها انسان نباشند و اینها را بگوییم که انسان نباشند.»
اینها انسان نباشند و اینها را بگوییم که انسان نباشند. اینها انسان نباشند و اینها را بگوییم که انسان نباشند. اینها انسان نباشند و اینها را بگوییم که انسان نباشند.

վաստրությունը սահմանափակվեց քաղաքացիների համարությամբ որենքի առաջ, իսկ վորպես մարդու իրավունքներից ամենաեյտականը բուրժուական սեփականության իրավունքը հայտարարվեց : Բանականության սկզբությունը, Ուստային «հասարակական դաշինքը» գործնականում գուրս յեկալ և կարող եր գուրս գալ միայն բուրժուական գեմոկրատական հանրապետություն : ԽVIII դարի մեծ մտածողները, ինչպես և նրանց բոլոր նախորդները, չեյին կարող գուրս գալ այն սահմաններից, վոր նրանց առաջ եր դրել նրանց սեփական դարաշրջանը :

Բայց այն հակառակության կողքին, վոր կար Փեղալական աղնվականության և վորպես մնացած ամբողջ հասարակության ներկայացուցիչ հանդիս յեկած բուրժուազիայի միջև, դոյցության ուներ ընդհանուր հակառակություն շահագործողների ու շահագործվողների միջև, հարուստ պորտառույժների ու աշխատավոր շքավորների միջև։ Հենց այս հանդամանքն ել հնարավորության տվյալ բուրժուազիայի ներկայացուցիչներին հանդես դալու վո՛չթե վորպես վորեւ առանձին դասակարգի, այլ ամբողջ տառապող մարդկության ներկայացուցիչների դերում։ Ավելին։ Բուրժուազիան իր ծառաման բովելից ծանրաբեռնված եր իր սեփական հակառակությամբ։ Կապիտալիստները չեն կարող դոյցության ունենալ առանց վարձու բանվորների, և հենց նույնպիսի հարաբերությամբ, ինչպես վոր միջնադարյան ցիսային վարպետն եր զարգանում ու դառնում ժամանակակից բուրժուա, ցիսային յենթավարպետն ու արտաշեխային որամշակն եյին զարդանում և պրոլետարիա դառնում։ Ու թեև ամբողջովին վերցրած բուրժուականության դեմ մզած իր պայքարի մեջ վորոշիրական ազնվականության դեմ այն ժամանակվա տարբեր աշխատավոր զասակարգերի ներկայացուցիչը համարելու, այնուամենայնիվ ամեն մի բուրժուական խոշոր շարժման ժամանակ

բռնկվում ելին այն դասակարգի ինքնուրույն շարժումները, վորը արդի պըոլեատիատի ավելի կամ պակաս զարդացած նախորդն ե յեղել: Այդպէս եր անարապահաների և թուժաս Մյունցերի շարժումը ուժորմացիայի և զյուղացիական պատերազմների դարաշրջանում Գերմանիայում¹, լեվէլերների շարժումը և անպլիական մեծ հեղափոխության² ժամանակ, Բարյոֆի շարժումը Փրանսական մեծ հեղափոխության ժամանակ: Դեռ չկազմակերպված դասակարգի այդ հեղափոխական փորձերին ընթացակից ելին համապատասխան թեորիական յերույթներ, այդպէս են իդեալական հասարակակարգի ուստոպիտական պատկերումները ԽVI և XVII դարերում³, իսկ XVIII-ում արդեն ուղղակի կոմունիստական թեորիաները (Մորելի և Մարելի): Համասարության պահանջն արդեն չեր սահմանափակվում քաղաքական իրավունքների բնագավառով, այլ տարածվում եր առանձին անհատների: Հասարակական դրության վրա, ապացուցվում եր վո՞չ միայն դասակարգային արտօնությունների, այլև հենց դասակարգային տարբերությունների վերացման անհրաժեշտությունը: Ասկետորեն դաժան, սպարտական կոմունիզմը, վոր դատապարտում եր կյանքի ամեն մի վայելք, նոր ուսմունքի առաջին արտահայտությունն եր: Հետո հանդես յեկան յերեք մեծ ուստոպիտաները—Մեն-Միմոնը, վորի մոտ բուրժուական ձգտումները մասմբ գեռ համերաշխում ելին պըոլետարիատի շահերի պաշտպանության հետ, Ֆուրյեն և, վերջապէս, Ուսենը, վորն ամենազարդացած կապիտալիստական արտադրության յերկրում և արտադրության այդ յեղանակի ծնած հակադրությունների ազդեցության տակ մշակեց դասա-

¹ Անֆորմացիան և զյուղացիական պատերազմները Գերմանիայում տեղի յեն ունեցել XVI դարի սկզբներին: Անֆորմացիայի մասին տե՛ս Թ. Ենդելու «Օճ историческом материализме»: Խմբ.:

² Խորը վերաբերում ե անպլիական բուրժուական հեղափոխությանը (1640–1660), վոր ուղղական բացարձակ միապետության և Փեոդալ-կարգաժամանակի (լենդլորդերի) տիրապետության դեմ: Կորմիլը—բուրժուազիայի առաջ քաշած դիլտասարը—ճնշեց լեվէլերների շարժումը: Խմբ.:

³ Բարյոֆի կոմունիզմը հենվում եր հալասարության իդեալի վրա: Բարյոֆը և նրա կողմանակիցները (բարուվիստները) հույս ունեցին կոմունիստական հասարակակարգին հասնելու գավառիր-կոմունիստների մի փոքր խմբի հատարած դաշտադրության ու հեղաշրջման միջոցով: Խմբ.:

⁴ Ենդելու այսուղե նկատի ունի «իդեալական հասարակակարգի պատկերումները», առանց մասնակը սեփականության, ուստոպիտական սոցիալիզմի ներկայացուցիչների—թուժաս Մորի (XVI դար) և կամպանելլայի (XVI–XVII դարեր) յերկերում: Խմբ.:

կարգային տարբերությունների վերացման մի շարք նախագծեր, վորպէս մի սխատեմ, վորն անմիջաբար հարում եր Փրանսական մատերիալիզմին:

Այդ յերեք մեծ ուստոպիտաներն ել համերաշխում ելին միմյանց հետ այն բանում, վոր յերբեք իրենց չելին ցույց տալիս այդ ժամանակներն արդեն պատմականորեն զարդացող պըոլետարիատի շահերի ներկայացուցիչներ: Լուսավորիչների նման, նրանք ուղղում ելին ամենից առաջ ազատագրել ամբողջ մարդկությունը և վոչ թե միայն հասարակական վորոշ դասակարգի: Ինչպես և նրանք, սրանք ել ելին ուղղում հաստատել բանականության և հայիտենական արդարությունը, ինչպես յերկինքը յերկրից, տարբերվում ե թաղավորությունը, ինչպես յերկինքը յերկրից, տարբերվում ե Փրանսական լուսավորիչների բանականության թաղավորությունից: Բուրժուական հասարակակարգը, վոր հիմնված ե այդ լուսավորիչների սկզբունքների վրա, նույնակես անբանական մունագում ներկայացի և միզմ ներկայական հասարակական մարդանքով, ինչպես ֆեոդալիզմը և բոլորնախիկին հասարակական ձևերը: Մինչև այժմ բանականության և արդարության իսկական որենքները հայտնի չեն յեղել մարդկությանը, և միայն այդ որենքները պատճառով ել նա չի զեկավարվել գրանցով: Պարզապես չի յեղել այն հանճարեղ մարդը, վոր հատկապես այժմ հրապարակ յեկալ, և վորը ճանաչեց ամբողջ ճշմարտությունը: Վոր նա հատկապես այժմ հրապարակ յեկալ, վոր ճշմարտությունը միայն այժմ հանվարակ հանված, —այդ ամեննեին ել պատմական զարդացման հրապարակ հանվարակ հանված արդու ընթացքի անհրաժեշտ արդյունքը չե, մի անխուսափելի երաշարադրություն չե, այլ պարզապես մի յերշանիկ պատճառականություն: Հանճարեղ մարդը կարող եր նույնականի հաջողությամբ ծննդել արանից հարյուր տարի առաջ և դրանով մարդկություններից, պայքարից ուստապանքներից:

Մենք տեսանք, թե ինչպես հեղափոխությունը նախապատրաստող՝ XVIII դարի փիլիսոփաները գիմում ելին բանականությանը, վորպէս միակ գատակալորին գոյություն ունեցող ամեն բանի վրա: Նրանք պահանջում ելին հիմնել բանական պետություն, վրանական հասարակություն և անխնա կերպով վերացնել այն ամենը, ինչ համաստ է հալիտենական բանականությանը: Մենք ամենը, այս համաստ է հալիտենական բանականությանը: Վոր անապես մի սխատեմ, այս համաստ է առաջ անապես արդարությունը իրականում գուրս յեկալ գարդացող ու ժամանակակից բուրժուազիականություններից, պայքարից ու փոխող միջին քաղենու իդեալականացված խելքը միայն: այդ փոխող միջին քաղենու ուստականացված խելքը միայն:

ՅԵԹԵ Փրանսական հեղափոխության ստեղծած հասարակակարգը և նոր պետությունը կարող ել եյին բանական թվալ հին հիմնարկությունների համեմատությամբ, ապա նրանք համենայն դեպս չառ հեռու եյին բացարձակ բանական լինելուց: Բանականության թագավորությունը բոլորովին խորտակվեց: Առաջարկության հասարակական դաշինքն իր ունալ իրականացումը բարակ տեսարի¹ տիրապետության մեջ, վորոց իր քաղաքական ընդունակության հավատը կորցրած բուրժուազիան փրկություն եր փնտրում ոկզում դիրեկտորիայի² կաշառվածության մեջ, իսկ հետո նապահոնյան դեսպոտիզմի թեկի տակ: Խստացյալ հավիտենական խաղաղությունը վերածվեց նվաճողական պատերազմների մի անմերջ չարքի:

Ամելի հաջող չընթացավ բանական հասարակակարգի գործը: Հակադրությունը հարստության ու աղքատության միջև ընդհանուր բարորության մեջ լուծում ստանալու փոխարեն, ընդհանակառակը, ուժեղացակ ցեխային ու այլ արտոնությունների վերացման հետևանքով, վորոնք վորոշ չափով վորպես քողարկում եյին ծառայում այդ հակադրության համար, ինչպես նաև այդ հակադրությունը վորոշ չափով մեղմացնող յեկեղեցական բարեղործության վերացման հետևանքով: Այժմ Փեռագալական կապանքներից գործնականապես իրականացված «սեփականության աղատությունը» մանր բուրժուազի և գյուղացու համար դարձավ խոշոր կափառակի և խոշոր հողատիրության հզորակույն մըցությամբ ճպման մանր սեփականությունը հենց այդ մաղնատներին ծախելու աղատություն և այդպիսով մանր բուրժուաների և գյուղացիների համար դարձավ աղատություն սեփականությունից: Արդյունաբերության արագ զարգացումը կազմիտալիստական հիմքի վրա բանվորական մասսաների աղքատությունն ու տառապանքները դարձրեց հասարակության գոյության անհրաժեշտ

¹ 1793—1794 թ. թ. Ֆրանսիայի հեղափոխական կառավարությունը, վորք գլուխ կանգնած եյին յակորինները (հեղափոխական մանր բուրժուազի և պէտքաշական մասսաների ներկայացուցիչները), կիրառում եր տեսարի ռեժիմը, վորպես հականական կովկելու միջոց: Խմբ.:

² Դիրեկտորիա յեր կազմում ֆրանսական կառավարությունը, վոր հականական բուրժուազիան հաստատեց տերմիդորյան հակահեղափոխական հեղաշրջումից հետո (1794 թ. հուլիս), յեր նա տապալեց յակորինյան դիրեկտուրան: Դիրեկտորիան գոյություն ունեցավ 1795—ից մինչև 1799 թ. և տառապալից նապուեն նոնապարտի ճեռքով: Նապուենի ժամանակ ել, վորն ոկզում հոչակից քառաշին կոսուում, իսկ հետո՝ Ֆրանսիայի կայսր (1804 թ.), Ֆրանսիան մղրում եր այն նվաճողական պատերազմները, վորոնց մասին հետաքայում խոսում ե նոդելսը: Խմբ.:

պայմանը: Կանխիկ վողը, Կառլեյլի¹ արտահայտությամբ, դարձավ այդ հասարակության միակ շաղկապող տարրը: Հանցագործությունների թիվը տարեցտարի աճում եր: Յեթե Փեղալական դարաշրջանի ախտելը, վորոնք առաջ ցուցադրվում եյին, այժմ թեև վոչնչացված ել չեյին, բայց այնուամենայնիվ առայժմ հետին պլանն եյին քշված, դրա փոխարեն ե'լ ավելի փարթամորեն ծաղկեցին նրանց տեղ բուրժուազիան ախտերը, վորոնք առաջ վախկոտաբար թաղնվում եյին մթության մեջ: Առևտուրը գնալով ավելի ու ավելի յեր շաղախվում խարեբայությամբ: «Յեղթայրության» հեղափոխական դեկլը իրականացավ խարդախությունների և մրցությամբ ծնված նախանձի մեջ: Կոպիտ բռնությունը փոխարինվեց կաշառքով, և սրի տեղ հասարակական իշխանության ամենազվալոր լծակը փողը դարձավ: «Առաջինդիշերված իրավունքը» ժառանգաբար Փեղալակներից անցավ Փարբեկանուներին: Պունկությունն աճեց չափերով, և նույնիսկ ինքը՝ ամուսնությունը մնաց, ինչպես և առաջ, վորպես պոռնը կության որենքով ընդունված ձեւ, պաշտոնական քողարկում, բացի դրանից՝ լրացվելով ամուսնական հավատարմության բազմաթիվ խախտումներով: Մի խոսքով, «բանականության հաղթության» հետքով ծաղած հասարակական ու քաղաքական հիմնարկները գուրս յեկան լուսավորիչների փայլուն խոստումների՝ դասը հիասթափություն առաջացնող մի կծու ծաղրանկար: Պակասում եյին միայն այդ հիասթափությունը հավաստելու ընդունակ մարդիկ, և այդ մարդիկ հանդես յեկան նոր դարի սկսումով:

1802 թ. լույս տեսան Սեն-Սիմոնի «Ժընյան նամակները». 1808 թ. լույս տեսավ ֆուրյեյի առաջին յերկը, թեև նրա թեորիայի հիմքը վերաբերում ե դեռևս 1799 թվականին. 1800 թ. հունվարի 1-ին Ռոբերտ Ռուենը ձեռնարկեց Նյու-Լենարկի կառավարմանը:

Բայց այդ ժամանակ կապիտալիստական արտադրությունը, իսկ նրա հետ միասին նաև բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև յեղած հակադրությունը գեռ չառ անդարդացած եյին: Անգլիայում գեռ նոր առաջ յեկած խոշոր արդյունաբերությունը ֆրանսիայում գեռ անհայտ եր: Մինչդեռ միայն խոշոր արդյունաբերությունն է աստիճանաբար հասցնում կոնֆլիկտաների վոչնական կուսակցության մանիֆեստը: Խմբ.:

¹ Տ. Կառլիյլ—դրոգ և պատմաբան, ֆեղալական ոոցիալիզմի ներկայացուցիչներից մեկն Անգլիայում: Ֆեղալական ոոցիալիզմի մասին անգլ. «Կուսակցության կուսակցության մանիֆեստ»:

արտադրողական ուժերի և վոլխանակության ձևերի միջև, և
միայն խոչոր արդյունաբերության ստեղծած այդ կոնֆլիկտներին
են ճակատագրական անհրաժեշտությամբ հեղաշրջում առաջաց-
նում արտադրության յեղանակի մեջ և հասցնում նրա կապիտա-
լիստական բնույթի վերացմանը, ընդվորում նույն այդ խոչոր
արդյունաբերությունն և արտադրողական ուժերի վիթխարի
զարգացումով միջոցներ տալիս նաև իր խոր ստեղծած կոնֆլիկտ-
ները լուծելու համար: Յեթե 1800 թ. ժամանակակից հասարա-
կակարգից բղխող կոնֆլիկտները նոր միայն ծնվում եյին, ապա
ե՛լ ավելի պակաս եյին դրանց լուծման միջոցները: Թեև տեսողի
ժամանակ Փարիզի չունեսոր մասսաները մի բոպեյով դրավեցին
իշխանությունը և կարողացան, այդպիսով, հաղթության հասց-
նել բուրժուական հեղափոխությունն ընդդեմ հենց այդ բուրժու-
ազիայի, բայց դրանով նրանք միայն ապացուցեցին այդ մասսա-
ների կայուն տիրապետության ամրող անհնարինությունն այն
ժամանակվա պայմաններում: Զունեորների ընդհանուր մասսայից
դեռ չանցատված պրոլետարիատը այն ժամանակ նոր դասակար-
գի միայն սաղմն եր կազմում և ընդունակ չեր քաղաքական ինք-
նուրույն գործողության: Նա այն ժամանակ միայն մի ճնշված,
տառապող մասսա յեր, վորն իր անողնականության մեջ ընդու-
նակ եր վրկություն սպասելու միայն վորեե արտաքին, բարձրա-
գույն ուժից:

Այդ պատմական գրությունն անդրադարձավ նաև սոցիալիզմի հիմնադիրների ուսմունքի վրա: Կազիտալիստական տհաս արտադրությանը, գասակարգային տհաս հարաբերություններին համապատասխանում է եյին նաև տհաս թեորիաներ: Հասարակական խնդիրների լուծումը, վոր գեռ պարուրված եր անզարդացած տնտեսական հարաբերությունների մշուշով, պետք յեղալի հնարել, մարդկային զլիսից ստեղծել: Ակներեւ եյին միայն հասարակակարգի թերությունները, նրանց վերացումը դարձավ մտածող բանականության խնդիրը: Պահանջվում եր հնարել մարդկային հարաբերությունների մի նոր, ավելի կատարյալ սիստեմ և այն փաթաթել դոյլություն ունեցող հասարակության վկին պրոպագանդայի միջոցով, իսկ ըստ հնարավորության, նաև ցուցադրական փորձերի որինակներով: Սոցիալական այդ նոր սիստեմները նախապես գատապարտված եյին ուսուողիաներ մնալու, և վորքան ավելի ջանասիրությամբ եյին մշակվում նրանք իրենց մանրամասնություններով, այնքան ավելի եյին ոլանում գեպի գուտ Փանտազիայի բնադրավառը:

Այս փաստը նշելուց հետո մենք արդեն կանգ չենք առնի նըռավոք, քանի վոր հարցի այս կողմն անցյալին ե պատկանում։ Գրական խանութպաններին թողնենք ինքնաբավական կերպով քջջել այդ ծիծաղելի Փանտազիաները և հրճվել իրենց սեփական ժամանելակերպի զգաստությամբ այդպիսի «ցնդաբանության» համեմատությամբ։ Մեզ անհամեմատ ալելի յեն ուրախացնում Փանտաստիկ ծածկույթի տակեց ամեն քայլափխում գուրս ցայտող այն հանճարեղ մտքերն ու մտքերի սաղմերը, վոր չեն տեսնում կույր Փիլիստերները։

Սեն-Սիմոնը Փրանսական մեծ հեղափոխության դավակն եր՝ վորի սկզբում նա դեռ յերեսուն տարեկան էլ չեր դարձել։ Հեղափոխությունը յերրորդ դասի, այսինքն ազգի՝ արտադրության ու առևտորի մեջ զբաղված մեծամասնության հաղթությունն եր մինչև այդ արտօնյալ, պորտարույժ դասերի—ազնվականության ու հոգեորակականության հանդեպ։ Բայց յերրորդ դասի հաղթությունը իրապես այդ դասի մի փոքր մասի հաղթությունը դուրս յեկավ։ Նա հանդեց քաղաքական իշխանության նվաճման այդ դասի սոցիալ-արտօնյալ մասի, ունեոր բուրժուազիայի կողմից։ Բացի դրանից, այլ բուրժուազիան սաստիկ զարգացավ դեռ հեղափոխության պրոցեսում, մի կողմից՝ ազնվականությունից և յեկեղեցուց բռնագրավված, իսկ հետո ծախված հողային սեփականության սպեկուլացիայի միջոցով, մյուս կողմից՝ ռազմական մատակարաների ձեռքով ազգին խաբելու միջոցով։ Հենց այդ սպեկուլանտների տիրապետությունն ել դիրեկտորիայի շրջանում Ֆրանսիային և հեղափոխությանը կորսոյան յեղբին հասցըց և դրանով ել առիթ տվեց Նապոլեոնին պետական հեղաշրջման հաղանությանը արտօնությանը պահպանությանը միացնեց։ Այդպիսով, Սեն-Սիմոնի զվարում յերրորդ դասի և արտօնյալ դասերի պայքարը հակադրության ձև լնդունեց «բանվորների» և «պորտաբույծների» միջև։ «Պորտաբույծներ» եյին հանդիսանում վոչ միայն արտօնյալ դասերի նախկին ներկայացուցիչները, այլ նաև ֆաբրիկանտները, վաճառականներն ու բանկիրները։ Վոր պորտաբույծները կորցը եյին մտավոր դեկավարության և քաղաքական տիրապետության ընդունակությունը, —վորեւ կասկածի յենթակա չեր և վերջանապես հաստատվեց հեղափոխությամբ։ Վոր ընչազուրկներն այդ լնդունակությամբ ոժտված չեյին, այդ մասին, Սեն-Սիմոնի այդ լնդունակությամբ ոժտված չեյին, այդ մասին, Սեն-Սիմոնի կարծիքով, տեսորի դարաշրջանի փորձն եր վկայում։ Իսկ ո՞վ

պետք ե այդ գեղքում զեկավարել ու իշխեր։ Սեն-Միմոնի կարծիքով—գիտությունն ու արդյունաբերությունը, վորոնք միացած ելին նոր կրօնական կապով՝ վորագես մի խստ հերթարխիական, անխուսափելիորեն միստիկական, «նոր քրիստոնեյություն», վոր կոչված եր վերականդնելու ռեֆորմացիայի ժամանակից կործանված՝ կրօնական հայացքների միասնությունը։ Իսկ դիտությունը—այդ պաշտոնական դիտնականներն ելին, իսկ արդյունաբերությունը—այդ առաջին հերթին ակտիվ բուրժուատները, Փարբեկանները, վաճառականները, բանկիրներն ելին։ Ճիշտ ե, այդ բուրժուատները պետք է պետական ստորագրությունների նման, ամբողջ հասարակության հավատարմատար պնձերի նման մի բան գառնային, բայց բանվորների նկատմամբ իշխող և տնտեսապես արտոնյալ դիրք ելին պահպանում։ Ինչ վերաբերում ե բանկիրներին, ապա նրանք կոչված ելին ամբողջ հասարակական արտադրությունը կարգավորելու վարկը կարգավորելու ողնությամբ։ Այդպիսի հայացքը լիովին համապատասխանում եր այն դարսը ջանին, յերբ Ֆրանսիայում խոչը արդյունաբերությունը, իսկ նրա հետ միասին հակադրությունը բուրժուատագիայի և պրոլետարիատի միջև միայն նոր ելին սկսում դարձանալ։ Բայց այն, ինչ Սեն-Միմոնը հատկապես ընդդուռում ե, —այդ հետեւյալն եր. ամենուրեք և շարունակ նրան առաջին հերթին հետաքրքրում ե «ամենաբազմաթիվ և ամենաչքավոր զասակարդի» (la classe la plus nombreuse et la plus pauvre) ճակատագիրը։

Սրբեն Սեն-Միմոնի «Ժընեվան նամակներում» մենք դունում
ենք այն դրույթը, թե քրոլոր մարդիկի պետք ե աշխատեն»· այդ
նույն աշխատության մեջ նա արդեն նշում ե, վոր տեսորի տի-
րապետությունը Ֆրանսիայում չունեռ դասակարգերի տիրապե-
տությունն եր: «Տեսե՛ք, — գոչում ե նա, դիմելով վերջններին, —
ինչ տեղի ունեցավ Ֆրանսիայում, յերբ այստեղ ձեր ընկերներն
եյին իշխում: Նրանք ոո՛վ ստեղծեցին»: Հանճարեղ խորաթա-
փանցություն եղ պետք 1802 թ. ըմբռնելու համար, վոր Փրան-
սական հեղափոխությունը դասակարգային պայքար եր, և վո՛չ
միայն ազնվականության ու բուրժուազիայի միջև, այլ նաև ազ-
նվականության, բուրժուազիայի և չունեռը մասաների միջև: 1816 թ. Սեն-Միմոնը հայտարարում է, վոր քաղաքականությու-
նը արտադրության դիտությունն ե, և նախորոք գուշակում է
նրա ամենալրաբար կլանումը եկոնոմիկայի կողմից: Եթե այս-
տեղ քաղաքական հիմնարկների՝ անտեսական հիմքերից ծագելու
միաբար միայն ուսումնական մեջ ե արտահայտված, ապա միանալու-

մայն ուշարձ կերպով և արտահայտված այն միտքը, վոր քաղաքական իշխանությունը մարդկանց վերաբերմամբ պետք է վերածի իրերի կառավարման, արտադրության պլոցեսների ղեկավարման, այսինքն՝ հասցնի «պետության վերացման», վորի մասին այնքան շատ աղմկում ելին վերջին ժամանակ: Իր ժամանակակիցների նկատմամբ նույնպիսի գերազանցությամբ Սեն-Միմոնը հայտարարում է 1814 թ., — դաշնակիցների Փարիզ մտնելուց անմիջապես հետո, — և այնուհետև 1815 թ. (հարյուր որվան պատերազմի ժամանակ)¹, վոր Ֆրանսիայի դաշինքն Անդլիայի հետ և այդ յերկու յերկրներինը Գերմանիայի հետ Յելլոպայի խաղաղ պարզացման ու ծաղկման միակ յերաշխիքն է: Շատ արիություն ու պատմական հեռատեսությունն եր հարկավոր 1815 թ. Փրանսացիներն դաշինք քարոզելու համար Վատերլոոյում հաղթող ների հետ:

ՅԵՐԵ ՍԵՆ-ՄԻՄՈՆԻ Հայացքների հանճարեղ լայնությունը
Նրան թույլ տվեց վորսալ հետազա համարյա բոլոր սո-
ցիալիստական իդեաների, վոչ միայն տնտեսական բնագավառին
վերաբերող իդեաների սաղմերը, ապա Ֆուրյեն, իր կողմից, մեռ
առվելս և դոյություն ունեցող հասարակակարգի խորապես հետա-
ռը քրբող քննադատությունը, վոր միաժամանակ արտահայտված և
զուտ Փրանսական սրամտությամբ։ Նա նախահեղափոխական
բուրժուազիայի վողեջնչված մարդարեներին և նրա հետհեղափո-
խական կաշառված շողոքորթներին բռնում և նրանց խոսքերով։
Նա անխնա կերպով մերկացնում և բուրժուական աշխարհի նյու-
թական ու բարոյական ամբողջ սնանկությունը և այդ համեմա-
տում և նախկին լուսավորիչների փայլուն խոստումների հետ այն
ժամին, թե գալու յե բանականության թաղավորությունը, ամեն-
քին յերջանկություն բերող քաղաքակրթությունը, թե մարդկու-
թյունն ընդունակ է անվերջ կատարելազործվելու։ Նա մերկաց-
նում է ժամանակակից բուրժուական իդեոլոգների փեսուն Փրազե-
ալուդիայի դատարկությունը, ցույց տալով, թե ինչ վողորմելի

¹ Նապոլեոն I պատերազմիները վերջացան նրա պարտությամբ։ Ֆրանսիայի կազմից մի գաշխատ համարյա բռնը յելքոպական պետություններից՝ ուրժուական Անգլիայի և ճորտասիրական Ռուսաստանի գլխավորությամբ։ 1814 թ. դաշնակիցների զորքերը Փարիզն առան, իսկ Նապոլեոնն ստիպված յեղանակիցների վրա գրագիրը 1815 թ. նա փորձ արեց իր իշխանությունը վերականգնելու և նոր պատերազմ մզելու դաշնակիցների վեմ (Հարյուր որվասիկաններու և ճորտասիրական Անգլիայի ջարդվեց Վատուրոոյի մաս և դարձյալ գահընկեց կողմէ), բայց կրկին ջարդվեց կետուրոոյի մաս և դարձյալ գահընկեց առվել զաշնակիցների կողմէ, իսկ հետո աքսորվեց ու Հեղիների կողին, վերը և մեռավ։ Խմբ։

իրականություն և համապատասխանում նրանց վերաբարձ խոսքերին, և իր ամբողջ ծաղրանքն ե զեղում այդ Փրազելուղիայի ամենակատարյալ ձախողման առթիվ։ Ֆուրյեն միայն քննադատչե, բնալորությամբ միշտ կենուուրախ՝ նա դարձավ յերգիծաբան, և նույնիսկ բոլոր ժամանակների ամենամեծ յերգիծաբաններից մեկը։ Դիպուկ ծաղրական բառերով նա նկարագրում ե սպեկուլատիվ խաբերայությունն ու մանր-չարչական վոդին, վոր համակել եր ամբողջ Փրանսական առևտուրը հեղափոխության մայրամուտի շրջանում։ Ե՛լ ավելի հաջող են բուրժուական հասարակության մեջ սեռերի հարաբերությունների յերգիծաբանական նկարագրությունները և կնոջ դրությունն այդ հասարակության մեջ։ Առաջինը նրան ե պատկանում այն միտքը, թե յուրաքանչյուր տվյալ հասարակության մեջ կնոջ ազատագրման աստիճանը ամեն մի ազատագրման բնական չափանիչն է։ Բայց ֆուրյեն ամենից ավելի բարձրանում ե մարդկային հասարակության պատմության վերաբերյալ իր հայացքով։ Այդ պատմության ամբողջ նախորդ ընթացքըն բաժանում ե զարդացման չորս աստիճաններ։ Վայրենություն, բարբարոսություն, նահասկետական շրջան և քաղաքակրթություն։ Վերջինի մասնան տակ նա հասկանում ե այժմ գոյությունն ունեցող այսպես կոչված բուրժուական հասարակությունը, վոր սկսվել ե XVII դարից, և ցույց ե տալիս, թե ինչպես այդ «քաղաքակրթությունը բարդ, յերկիմաստ, յերկողմի ու կեղծավոր ե զարձնում ամեն մի ախտ, վոր սկարզ ձեռվ եր մնում բարբարոսության ժամանակ»։ Նա ցույց ե տալիս անհաղթահարելի ու հալիտենապես վերանորոգվող հակասությունների այն «կախարդական շրջանը», վորի մեջ շարժվում ե քաղաքակրթությունը, շարունակ համսնելով այսպիսի արդյունքների, վորոնք հակառակ են նրանց, վորոնց անկեղծորեն կամ առերես նա ծգուում ե։ Որինակ, նրա ասելով, «քաղաքակրթության մեջ աղքատությունը հենց առատությունից ե ծնվում»։ Ակնհայտ ե, վոր ֆուրյեն նույնպես վարպետորեն ե տիրապետում դիալեկտիկային, ինչպես և նրա ժամանակակից Հեղելը։ Նույնպես դիալեկտիկորեն նա պնդում ե, հակառակ մարդու կատարելազործման անսահման ընդունակության վերաբերյալ այն ժամանակ իշխող թերիայի, վոր պատմական յուրաքանչյուր Փաղիս ունի աճման ու անկման իր շրջանը, և իր այդ հայացքը նա զարդացնում է ամբողջ մարդկության աղաղայի նկատմամբ։ Կանտի նման, վորը ընագիտության մեջ զարգացնում էր յերկրագնդի աղաղա

կործանման գաղափարը, Ֆուլյեն պատմության իր ըմբռնման
ժեղ ե մտցրել մարդկության կործանման միտքը։
Այն ժամանակ, յերբ Ֆրանսիայի զվարով հեղափոխության
մըրիկն եր անցնում, մաքրելով յերկիրը, Անդլիայում կատարվում
էր ալվելի պակաս աղջկալի, բայց վոչ պակաս վիթխարի մի հե-
ղաշընում։ Շողին ու մեքենաները մանուֆակտուրան դարձրին
ժամանակակից խոշոր արդյունաբերություն և հենց դրանով ել
հեղափոխականացրին բուրժուական հասարակության բոլոր հիմ-
քերը։ Մանուֆակտուրայի ժամանակների զարդացման դանդաղ,
տարտամ ընթացքը փոխվեց մըրիկի ու գրոհի մի խական ըլլ-
ջանի արտադրության մէջ։ Գնալով ալվելի արագ եր կատարվում
հասարակության շերտավորումը խոշոր կապիտալիստների և ըս-
նելոր ոլրութարների, խակ նրանց միջև, հին ժամանակների կա-
յուն միջին դասի վոխարեն, մենք տեսնում ենք չափաղանց յե-
րերուն դոյության դատապարտված և բնակչության ամենահոսուն
մասը ներկայացնող արհեստավորների ու մանր առեւտրականների
անկայուն մասսային։ Արտադրության նոր յեղանակը գեռ իր վե-
րընթաց զարդացման առաջին աստիճաններում եր գտնվում այդ
գեռ նորմակ, կանոնավոր, տվյալ պայմաններում միակ հնարա-
վոր արտադրացեղանակն եր, մինչեռ նա կարողացել եր արդեն
աղաղակող սոցիալական թշվառություններ ծնել—մեծ թվով ան-
տուն բնակչության կուտակում մեծ քաղաքների ամենավատթար
մութ փողոցներում, անցյալից ժառանգած բոլոր կապերի, նահապե-
տական ընտանեկան կենցաղի, նույնիսկ հենց ընտանիքի քայլքա-
յում, աշխատանքային որվա սարսափելի յերկարացում—առավե-
լապես կանանց ու յերեխաների համար, բարքերի ապականու-
թյուն բանվորական բնակչության լայն մասսաների շարքերում,
վորը հանկարծակի ձեռով նետվել եր գոյության բոլորովին նոր
պայմանների մէջ, զյուղից քաղաք, հողագործությունից արդյու-
նաբերություն, կյանքի կայուն պայմաններից՝ դոյության ամեն
որ փոփոխվող, անհօւսալի պայմանների մէջ։ Յեկ ահա այդ ժա-
մանակ ասպարեզ յեկավ վորպես ու ֆորմատոր մի քսանինը տա-
րեկան դործարանատեր, համարյա մանկական մաքրությամբ ո-
ւագնիվ բնավորության տեր մի մարդ և միաժամանակ մի բնա-
ծին առաջնորդ, վորի նմանը քիչ կա աշխարհում։ Ռոբերտ Ուուե-
նը յուրացրել եր ԽVIII դարի լուսավորիչների—մատերիալատնե-
րի ուսմունքն այն մասին, վոր մարդկային բնավորություն-
ի կազմից ե մեկ կողմից՝ նրա բնածին կազմակերպության, իս-
կազմիում ե մեկ կողմից՝ դոյության ամբողջ կազմակերպության, իս-
կազմից՝ ամբողջ կյանքի ընթացքում, իսկ հատկապես նրա

զարդացման շրջանում մարդուն ըրջապատող պայմանների վորխաղղեցությունից։ Նրա յեղբայրակիցների մեծամասնությունը ըստ դասի՝ արդյունաբերական հեղափոխության մեջ տեսնում եր ժիայն անկարգություն ու քառու, վոր պիտանի յեր պղտոր ջրում ձուկ վորսալու և արագ կերպով հարստանալու համար։ Ոուենը նրա մեջ տեսնում եր մի բարենպաստ առիթ իր սիրած իդեան իրականացնելու և դրանով ել քառուի մեջ կարդ մտցնելու համար։ Նա՝ վորպես գործարանի ղեկավար, վորտեղ 500-ից ավելի բանվոր եր աշխատում, արդեն փորձում եր, և վոչ անհաջող, այդ իդեան կիրառել Մանչեստրում։ 1800-ից մինչեւ 1829 թ. նա Նյու-Լենարկի մեծ մանածագործարանի կառավարիչն եր Շոտլանդիայում, և վորպես ձեռնարկության ընկերակից, այստեղ գործում եր նույն վոգով, բայց ե'լ ավելի մեծ աղատությամբ ու այնպիսի հաջողությամբ, վոր չուտով նրա անունը հոչակիլեց ամբողջ Յեվրոպայում։ Նյու-Լենարկի բնակչությունը, վոր աստիճանաբար աճելով դարձավ 2500 մարդ և դլսավորապես կազմված եր չափազանց խառը և մեծ մասամբ սաստիկ այլասերված տարբերից, նա դարձեց մի որինակելի գաղութ, վորտեղ հարբեցողությունը, վոստիկանությունը, քրեական դատարանները և դատավարություններն աղքատների ինամատարությանն անծանոթ յերեւոյթներ դարձան։ Նա իր նպատակին հասալ միմիայն նրանով, վոր բանվորներին զրեց մարդկային արժանապատվությանն ավելի համապատասխան պայմանների մեջ և մանավանդ հոգ տարավ մատաղ սերնդի լավ դաստիարակության մասին։ Նյու-Լենարկում առաջին անդամ մտցվեցին Ուուենի հնարած մանկապարտեղները։ Այստեղ յերեխաններին ընդունում եյին յերկու տարեկան հասակից սկսած։ յերեխաններն իրենք այնպես լավ եյին ժամանակ անցկացնում, վոր ծնողները դժվարությամբ եյին կարողանում նրանց տուն տանել։ Աշխատանքային որը Նյու-Լենարկում կըրճատվեց մինչեւ 10½ ժամ, մինչդեռ նրա հետ մրցող գործարաններում աշխատանքը 13 և 14 ժամ եր տեսում։ Իսկ յերբ բամբակի ճկնաժամը ստիպեց չորս ամսով աշխատանքները դադարեցնել, բանվորները շարունակում եյին լրիվ վարձատրություն ստանալ։ Յել այդ բոլորով հանդերձ ձեռնարկության արժեքը ավելի քան յերկու անդամ մեծացավ, և մինչեւ վերջը նա առատ յեկամուտ եր բերում տերերին։

Բայց այդ բոլորը չեր բավարարում Ոուենին։ Այն դրությունը, վորի մեջ նա զրեց բանվորներին, նրա աչքում դեռ յերբեք ել չեր համարապատասխանում մարդկային արժանապատվությանը։

«Եյս մարդիկ իմ ստրուկներն եյին», առում եր նա։ Նյու-Լենարկի բանվորների գոյության համեմատաւր սպայմաններն ամեններն ել բավարար չեյին նրանց մտքի ու բնավորության բազմակողմանի գարդացման համար, չխոսելով այլիս ուժերի ու ընդունակությունների աղատ գործադրության մասին։ «Իսկ մինչդեռ այս 2500 մարդկանց աշխատավոր մասն այնպիսի քանակությամբ ուեալ հարստություն ե ստեղծել, վորի արտադրության համար սրանից կես դար առաջ 600·000 մարդու աշխատանք կպահանջվեր։ Յես հարց տվի ինձ։ ՞՞ւր ե գնում 2500 բանվորի սպառած պրոդուկտների քանակության և այն քանակության տարբերությունը, վոր կպահանջվեր նախկին 600·000-ի համար։ Պատասխանը պարզ եր։ Այդ տարբերությունը ստանում եյին գործարանի տերերը՝ տարեկան 300·000 ֆունտ ստերլինգ (3·000·000 ռուբ.) յեկամտի ձեռով, բայց ի ձեռնարկության հիմնական կապիտալին հատկացվող 5%-ից։ Այդ պատասխանը ե'լ ավելի մեծ չափով, քան Նյու-Լենարկի նկատմամբ, կիրառելի յեր Անգլիայի մնացած բոլոր գործարանների համար։ «Առանց մեքենաների ստեղծած հարստության այս նոր աղբյուրի՝ հնարավորություն չեր լինի պատերազմներ մդելու նապոլեոնին տապալելու և հասարակական կառուցվածքի արկանության սկզբունքները վերականգնելու համար։ Իսկ այդ նոր ուժը չե՞ վոր բանվոր դասակարգի ձեռքի գործն եր»։ Ուստի նրան ել պետք ե պատկանեն այդ ուժի պտուղները։ Արտադրության նոր հզոր ուժերը, վորոնք մինչեւ այժմ միայն միավորների հարստացման և մասսաների օտքացման համար եյին ծառայում, Ոուենին պատկերանում եյին վորպես հասարակական վերակառուցման հիմքեր և պետք ե ծառայելին բոլորի բարեկեցությանը՝ վորպես հանրային սեփականություն։

Այդպիսի դուս դործնական հիմունքներով, վորպես յուրատեսակ առևտրական հաշվարկի պտուղ, ծագեց Ոուենի կոմունիզմը։ Այն մինչեւ վերջը պահպանեց իր այդ գործնական բարույթը։ Այսպես, 1823 թ. Ոուենը կազմեց կոմունիստական դարձութների նախագիծ իուլանդական աղքատությունը վերացնելու

¹ «The Revolution in Mind and Practice» («Հեղափոխություն մտքությունականություն») վերնակիրը կրոյ դիմումից, վոր ուղղված եր Յեվրոպայի բոլոր կարմիր հանրապետականներին, կոմունիստաներին և սոցիալիստներին։ 1848 թ. Փրանսական ժամանակավոր կառավարությանը, բայց հասցեագրված եր նաև «Ալիկոտրիա թագուհուն և նրա պատասխանատու Խորհըգականներին»։ (Յնգելսի ծամբքարությունը)։

և պատակով և այդ նախագծին կցեց անհրաժեշտ հիմնական կազմակերպությունը՝ առաջական ծախքերի և յեկամուտների ժանրամասն հաշիվը։ Ապադա հասարակակարգի իր վերջնական պլանում Ուունը առանձին ուշադրություն է զարգնում գործի աեխնիկական կողմի վրա, մանրակրկիտ կերպով մշակում և բոլոր մանրամասնությունները, ընդվորում կցում և հեռանկարային պլաններ, գծագիրներ ու նկարներ, և այդ բոլորը մի այնպիսի գործիմացությամբ, վոր յեթե ընդունվի հասարակական ռեֆորմների նրա մեթոդը, ապա շատ քիչ բան կարելի յե առարկել ֆորմների նրա մեթոդը, ապա շատ քիչ բան կարելի յե առարկել մանրամասնությունների գեմ նույնիսկ մասնավետի տեսակետից։

Կոմունիզմին անցնելը դարձակետ յեղավ Ուունի կյանքում։ Բանի գեռ նրա գործունեյությունը մի հասարակ մարդասիրություն եր, նրան հարստություն, ընդհանուր հավանություն, հարդանք ու հաջակ եր բերում։ Նա ամենաժողովրդական մարդն եր Յելոպայում։ Նրա ճառերին բարեհաճությամբ ունինդրում էին վո՛չ միայն նրա հասարակական դիրքի մարդիկ, այլև նույնիսկ մինչստրներն ու թագակիր անձննք։ Բայց հենց վոր նա հանդեմ յեկավ իր կոմունիստական թեորիաներով, իսկույն հանդաժանքները փոխվեցին։ Յերեք մեծ խոչընդոտներ, նրա կարծիքով, փակում եին հասարակական ռեֆորմների ճանապարհը—մասնավոր սեփականությունը, կրոնը և ամուսնության գոյությունը ունեցող ձեռ։ Պայքար սկսելով այդ խոչընդոտների գեմ, նա դիմեր, վոր նրան սպասում և մերժում պաշտոնական հասարակության մեջ և իր հասարակական դիրքից զրկվելը։ Բայց այդ նկատումները մաղաչափ անդամ չպակասեցրին նրա անխնա հարձակման յեռանդը։ Տեղի ունեցավ հենց այն, ինչ վոր նա նախառեսել եր։ Նրան վտարեցին պաշտոնական հասարակությունից։ արհամարհված մամուլի կողմից, աղքատացած Ամերիկայում կատարած անհաջող կոմունիստական փորձերից, վորոնք կլանեցին նրա ամբողջ կարողությունը, նա դիմեց ուղղակի բանվոր դասակարգին և նրա շարքերում աշխատեց ելի յերեսուն տարի։ Ամբողջ հասարակական շարժումը, բանվոր դասակարգի ձեռք բերող հասարակական շարժություններն Անդլիայում Ուունի անգան հետ են կապված։ Այսպես, 1819 թ., նրա հնդամյա ջանքերի ժողովի, անցավ կանանց ու յերեխաների աշխատանքը գործարաններում սահմանափակող առաջին որենքը։ Նրա նախարարությամբ գումարվեց առաջին կոնդրեսը, վորտեղ ամբողջ Անդլիայի արեգակությունիները միանալով կաղմեցին մի մեծ, ընդհանուր ար-

հետակցական միություն։ Դարձյալ նա կազմակերպեց, վորովես արդեն լիովին կոմունիստական հասարակակարգի անցնելու միջոցառումներ, մի կողմից՝ կոոպերատիվ ընկերությունները (սպառողական և արտադրողական), վորոնք հետադայում դորձնականութեն ապահովուցեցին առանց վաճառականների ու ֆարբերկանների կառավարվելու լիակատար հնարավորությունը, իսկ մյուս կողմից, բանվորական շուկաները, վորտեղ պրոդուկտները փոխանակվում եյին թղթադրամների միջոցով, վորոնց միավոր եր ծառայում աշխատանքային ժամանակի մեկ ժամը։ Այդ շուկաներն անխօսափելուրեն պետք և անհաջողության մատնվեյին, բայց նրանք լիովին կանխեցին հետագույն ժամանակների պրուդունյան փոխարակային բանկը², վորից նրանք տարբերվում եյին հենց նրանով, վոր նրանց հնարողը դրանք չեր համարում մի ունիվերսալ միջոց բոլոր հասարակական չարիքների դեմ, այլ առաջարկում եր վորպես ամբողջ հասարակության ավելի արժանապահ վերակառուցման անցնելու առաջին քայլերից մեկը։

Ուստողիստաների աշխարհացքը յերկար ժամանակ իշխում եր XIX դարի սոցիալիստական հայցքների վրա և մասամբ իշխում ե գեռ մինչեւ այժմ ել։ Դրան եյին հետեւում մինչև վերջին

¹ 1833 թ. Կոմեմբերին Ուունը նախագահում եր տրեխյունիոնների (անդպական արհեստական միությունների) պատգամավորների ժողովում, վորտեղ վորոշում ընդունվեց տրեխյունիոնների աղդային միավորում կազմելու ժաման։ 1834 թ. Տաղած «Տրեխյունիոնների աղդային մեծ միավորումը» ամբողջ յերկրի մասնաբոլ անդպական արհեստական միությունների միացյալ կազմակերպություն ստեղծելու առաջին փորձն եր։ 1834 թ. վերջին այդ կազմակերպությունը դադարեցրեց իր գոյությունը։ Խմբ։

² Պրուդունը (1809—1865) Փրանսական մանր-ռուբության իդեոլոգ և անարիթմի նախահայրն եր։ Զարգացող կապիտալիզմի բոլոր թշվառաթուններից փրկությունը Պրուդունը տեսնում եր վո՛չ թե պրոլետարիատի դիկտուրայի և սոցիալիստական հասարակակարգ ստեղծելու մեջ, այլ մանր տեսատերերից—ինքնուրույն արտադրողների հասարակակարգին, առանց վարձուացանքի շահագործման, մանր մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակակարգին վերադառնալու մեջ։ Դրան ել պետք ե ծառայեր նրա «Ժողովրդական բանկը», վոր հիմնված եր «Ճրի վարկի վրա»։ Պրուդունի նախագծով այդ բանկը պետք ե ապահովեր մանր «արտադրողների» պրոդուկտների փոխանակումը ըստ նրանց վրա ծախսված աշխատանքի («աշխատանքի փոխարեն աշխատանք»)։ Հենց զրանով ել նրանց վրկեր քայլերումից, աղքատությունից ու կործանումից։ Իսկ ինչ վերաբերում ե բանվորներին, ապանաց կապիտալիստական շահագործումից պետք ե փրկեր նույն այդ ժողովրդական բանկը, նրանց ես գարձնելով ինքնուրույն մանր «արտադրողներ»։ Խմբ։

ժամանակները բոլոր անդիմական ու Փրանտական սոցիալիստները, ինչպես նաև նախկին գերմանական կոմունիստները, չբացառելով Վայշլիզմը նրանց պատկերացմամբ բացարձակ ճշմարտության, բանականության, արդարության արտահայտությունն ե, և բավական ե միայն հայտնաբերել այն, վորպեսպի նա իր սեփական ուժով ամբողջ աշխարհը նվաճի. և քանի վոր բացարձակ ճշմարտությունը կախում չունի ժամանակից, առածությունից և մարդկության պատմական գարգացումից, ապա ուրեմն զուտ պատահականության խնդիր ե, թե վորտեղի յերբ այն կհայտնադորձվի: Ըստ վորում բացարձակ ճշմարտությունը և արդարությունը ամեն մի դպրոցի հիմնադրի մոտ տարբեր են և պայմանավորվում են նրա մաքի առույեկտիվ կառուցվածքով, նրա կյանքի պայմաններով, նրա դիտելիքների քանակությամբ և մտածելակերպով: Այդ պատճառով եր բացարձակ ճշմարտության այդ տարբեր տեսակները բարեկելիս կոնֆլիկտի լուծումը հնարավոր ե միայն նրանց վորխագործ հակասությունները հարթելու միջոցով: Դրանից վոչինչ չեր կարող մշակվել, բացի մի առանձին տեսակի եկեղեկտիկական անդույն սոցիալիզմից, վորն իրոք մինչեւ այժմ ել իշխում ե Անգլիայի ու Ֆրանսիայի բանվոր-սոցիալիստների մեծամասնության վկառում: Այդ եկեղեկտիկական սոցիալիզմը ներկայացնում է աղանդների զանազան հիմնադիրների ամենից ավելի հանրաճանաչ քննադատական զիտողությունների, տնտեսագիտական գրույթների և ապադա հասարակության վերաբերյալ պատկերացումների մի առանձին խայտաբղետ խառնուրդ, —մի խառնուրդ, վորն այնքան ավելի հեշտությամբ ե ստացվում, վորքան նրա բաղկացուցիչ մասերը շուտ են կորցնում իրենց սուրանկյուններն ու զենքերը վեճերի հոսանութի մեջ, ինչպես մանրաքարերը բարերը առվակում: Գիտություն դառնալու համար սոցիալիզմը պետք ե, ամենից առաջ, ոեալ հողի վրա կանդներ:

II

Մինչ այն՝ XVIII դարի Փրանսական փիլիսոփայության կողքին նրանից հետո զարդացավ գերմանական նորագույն փիլիսոփայությունը, վորն իր ավարտումը դատավ հանձին չեղելի: Այդ փիլիսոփայության մեծապույն ծառայությունը վերաբերձն եր դեպի գիտական, վորպես մտածողության բարձրագույն ձևում: Հինգ դիմում ե, ամենական փիլիսոփայությունը բոլորն ել ինսե դիտեկտիկներ ենին, և հունական փիլիսոփայությունը բոլորն ել ինսե դիտեկտիկներ ենին,

Արիստոտելը—ամենաունիվերսալ գլուխը նրանց մեջ—արդեն հետազոտել եր դիտեկտիկական մտածողության ամենաեյտիկան բոլոր ձեւերը: Թեև նոր փիլիսոփայության մեջ ել դիտեկտիկան փայլուն ներկայացուցիչներ ուներ (որինակ, Դեկարտը և Սպինոզան), բայց այդ փիլիսոփայությունը, հատկապես անդիմական փիլիսոփայության աղղեցության տակ, հետզհետե ավելի ու ավելի յեր թաղվում այսպես կոչված՝ մտածողության մետափիլիկական յեղանակի մեջ, վորը համարյա բացառապես տիրել եր XVIII դարի Փրանսացիներին, դոնե նրանց հատկապես փիլիսոփայական աշխատություններում: Սակայն փիլիսոփայության՝ վորպես այդպիսինի՝ սահմաններից դուրս նրանք կարողացան դիտեկտիկայի բարձր որինակներ թողնել մեզ. հիշենք միայն Դեկտիվիկայի բարձր որինակները մեզ. հիշենք միայն Դեկտիվիկայի «Բամոյի յեղբորորդին» և Ռուսոյի «Մարդկանց միջև անհրաժեշտյան ծավամն մասին» գրվածքը:

Համառոտակի կանդ առնենք այստեղ մտածողության յերկու ժեթողների եյության վրա:

Յերբ մենք մտքով քննում ենք բնությունը կամ մարդկության պատմությունը կամ մեր սեփական հոգևոր գործունեյությունը, ապա մեր առաջ նախ ծաղում ե կատերի ու փոխաղղումների անգիրը միահյուսման պատկերը, վորի մեջ վոչինչ չի մնում անշարժ ու անկուփոխ, այլ ամեն ինչ ներկայանում ե վորպես շարժվող, փոփոխվող, ծաղող ու անհետացող: Այսպիսով, մենք տեսնում ենք նախ մի ընդհանուր պատկեր, վորի մեջ մասնավորությունները (частности) ավելի կամ պակաս չափով դեռևս աննկատելի գառնում, մենք ավելի ուշք ենք դարձնում շարժման ընթացքն զանում, մենք ավելի հարաբեր գրա, քան այնքի վրա, անցումների ու կազմակցությունների վրա, անցության մեջ գտնվում: Աշխարհի վերաբերյալ այդ նախնական, նախիվ, բայց ըստ եյության ճիշտ հայցքը հատուկ ե յեղել հինգունական փիլիսոփայությանը և առաջին անգամ պարզ կերպով արտահայտված է Հերակլիտի կողմից—ամեն ինչ գոյություն չունի, քանի վոր ամեն ինչ եռում ե, ամեն ինչ շարունակ փոփոխվում, ամեն ինչ ծագման ու անհետացման մշտական պրոցեսի մեջ ե գտնվում: Սակայն, չնայած, վոր այդ հայցքը ճիշտ կերպով ե ընդդրկում յերեսույթների ամբողջ պատկերի ընդհանուր բնույթը, նա այնուամենայնիվ անբարար ե այդ պատկերը կազմող մասնավորությունները բարձրագույն համար, իսկ քանի գեռ մենք դրանք չգիտենք, մեզ բացատրելու համար, իսկ քանի գեռ մենք դրանք չգիտենք, մեզ համար պարզ չի նաև ընդհանուր պատկերը: Այդ մասնավորությար պարզ չի նաև ընդհանուր պատկերը:

թյունները ուսումնասիրելու համար մենք պետք եւ դրանք հանենք բնական կամ պատմական կապակցությունից, ամեն մեկը քննելով առանձին, հետազոտենք նրա հատկությունները, նրա մասնավոր պատճառները, ագղեցությունները և այլն։ Այս եւ ամենից առաջ ինապիտության և պատմության, այսինքն՝ գիտության այն ճյուղերի խնդիրը, վորոնք, միանդամայն հասկանալի պատճառով, կլասիկ ժամանակների հույների մոտ միայն յերկրորդական տեղ եյին դրավում, վորովհետեւ հույները նախ պետք եւ դրա համար անհրաժեշտ նյութը կուտակեյին։ Միայն այն ժամանակ, յերբ բնադիտական ու պատմական նյութը կուտակված եր բավարար քանակությամբ, կարելի յեր ձեռնարկել քննադատական հետազոտության, համեմատության, դասերի, սեռերի ու տեսակների բաժանելուն։ Այդ պատճառով ել բնության ճշգրիտ հետազոտման յեղանակները առաջին անդամ զարգանալ սկսեցին միայն ալեքսանդրյան շրջանի հույների մոտ, իսկ հետո, միջին դարերում, ե'լ ավելի դարձանում եյին արարների միջոցով։ Իսկ բուն բնադիտությունն ոկալում ե միայն XV դարի յերկրորդ կեսից, և այդ ժամանակից սկսած նա անընդհատ ավելի ու ավելի արագ առաջադիմում ե։ Բնության վերլուծումն իր առանձին մասերին, բնության մեջ տարենք յերեվությների ու առարկաների բաժանումը վորոշ դասերի, որպանական մարմինների բազմազան ներքին կազմության անտառմիական հետազոտումը—այդ ամենը հիմնական պայմանն եր այն վիթխարի հաջողությունների, վորոնցով նշանավորվեց բնադիտության դարդացումը վերջին չորս դարերի ընթացքում։ Բայց ուսումնասիրման նույն այդ յեղանակն ել մեր մեջ սովորությունն թողեց բնության յերեւությներն ու առարկաները բնույն նրանց առանձնացածության մեջ, նրանց ընդհանուր մեծ կասպակցություննից դուրս, և դրա հետևանքով—վո՛չ թե շարժման մեջ, այլ անշարժ դրությամբ, վո՛չ թե վորպես եյական կերպով փոփոխող, այլ վորպես հավիտենապես անփոփոխ, վո՛չ թե կենդանի,

այլ մեռած յերեւությներ ու առարկաներ։ Բեկոնի և Լոկիկի միջոցով բնադիտությունից փիլիսոփայության մեջ գոխադրվելով՝ այդ աշխարհայացքն ստեղծեց վերջին դարերի բնորոշ սահմանավակվածությունը—մտածողության մետաֆիզիկական յեղանակը։

Մետաֆիզիկի համար իրերը և նրանց մտապատկերները, այսինքն՝ գողափարները, առանձին, անփոփոխ, քարացած, մի անդամ ընդմիշտ տրված առարկաներ են, վորոնք յենթակա յեն հետազոտման մեկը մյուսի հետեւ և մեկը մյուսից անկախ։ Նա մտածում ե բացարձակապես անհաշտելի հակագրություններով։ Նրա խոսքը բաղկացած ե «Այսուայ», վոչը-վոչ, դրանից ավելին ի չարեն ե։ Նրա համար իրը կամ գոյություն ունի, կամ գոյություն չունի, առարկան չի կարող ինքն այդ իրը և միաժամանակ մի ուրիշ վորեւ բան լինել դրականն ու բացասականը բալորովին միմյանց հակադիր են։ Մտածողության վեց լինական առաջը մեզ լիովին համոզիչ ե թվուժ այն պատճառով, վոր նա հատուկ ե այսպես կոչված առողջ բանականությունը, վոր չափազանց պատկառելի ուղեկից ե անային կենցաղում, չորս պատի մեջ, զարմանալի արկաների յե յենթարկվում, հենց վոր նա խիզախում ե հետազոտության հեռավոր ճանապարհը բռնել։ Ճիշտ նույնպես ել մետաֆիզիկական մտածելակերպը, վոր միանդամայն որինական ե և, նայած առարկայի բնույթին, նույնիսկ անհրաժեշտ ե վորոշ, ավելի կամ ողակառ ընդդարձակ բնագալառում, վաղ թե ուշ հասնում ե այն սահմաններին, վորոնցից այն կողմը նա դառնում ե միակողմանի, սահմանափակ, վերացական և խճճվում ե անլուծելի հակասությունների մեջ, վորովհետեւ առանձին իրերի հետեւ նա չի տեսնում նրանց փոխադարձ կապը, նրանց գոյության հետեւ չի տեսնում նրանց ծագումն ու անհետացումը, նրանց հանդստի հետեւ չի տեսնում նրանց շարժումը, ծառերի հետեւ չի տեսնում անտառը։ Մենք, որինակ, առորյա կյանքում կարող ենք վստահությամբ ասել՝ գոյություն ունի՞ արդյոք տվյալ կենդանին, թե վոչ, բայց ավելի ճշգրիտ հետազոտելիս մենք համոզվում ենք, վոր այդ յերեմն մի վերին աստիճանի խճճված հարց ե, վորի գժվարությունները շատ լավ հայտնի յեն իրավաբաններին, վորոնք զուր փորձում են գտնել այն ուսցիունալ սահմանը, վորից այն կողմը յերեխայի սպանումը մոր արդանդում պետք ե սպանություն հա-

1 Գիտության զարգացման ալիքսանդրյան շրջանը վերաբերում ե մեր թվականության մինչև III դարից մինչև մեր թվականության VII դարն ընդուռ-կող ժամանակին և իր անունն ստացել ե յեղիպտական Ալեքսանդրիա քաղաքից (Անգլահանգիստ Միջերկրական ծովի ափին), վորն այն ժամանակված միջազգային անտեսական հարաբերությունների խոշորագույն կենտրոններից մեկն էր։ Ալեքսանդրյան շրջանում մեծ չափով զարգացան մի չարք գիտություններ—մաթեմատիկան (Եվկլիդես և Արքիմես), աշխարհագրությունը, աստղագիտությունը, անտառմիան, Փիլիպութիան և այլն։ Խմբ։

ժարել: Անհոգին և նմանապես վորոշել նաև ժահվան բոպեն, վորովհետև Փիղիողդիան ցույց և տալիս, վոր ժահը վո՛չ թե մի հանկարծական, վայրիենական գործողություն և, այլ մի շատ գանգաղ կատարվող պրոցես: Նմանապես և ամեն մի որդաշտական եյակ յուրաքանչյուր ավյալ ակնթարթում մնում և նույն ինքը և գարճայալ՝ վոչ նույն ինքը: Յուրաքանչյուր ակնթարթում առ վերամշակում ե իր դրսից ստացած նյութերը և իրենից ուրիշ նյութեր և արտաթորում, նրա մարմնի վորոշ բջիջները մահանում են, մյուսները ծնվում են, այնպես վոր վորոշ ժամանակաշրջան անցնելուց հետո ավյալ որդանիդի նյութը լիովին վերանորոգվում ե, փոխարինվում և ատոմների այլ կազմով: Ահա թե ինչու յուրաքանչյուր որդանական եյակ միշտ նույն բան և սակայն, նույն բանը չե: Ճիշտ այսպես ել ավելի ճշգրտորեն հետազոտելիս մենք գտնում ենք, վոր վորեւե հակադրության յերկու բևեռներն ել—դրականն ու բացասականը—նույնպես անբաժանելի յեն միմյանցից, ինչպես և հակադիր են, և վոր սրանք, չայցած ամբողջ հակադրությանը, փոխադարձաբար համակում են մեկ-մեկու: Այնուհետև մենք տեսնում ենք, վոր պատճառն ու հետևանքը պատկերացումներ են, վորոնք նշանակություն ունեն միայն առանձին զեպքի նկատմամբ կիրառելիս, բայց յեթե վոր առանձին զեպքը քննենք տիեզերական ամբողջության հետ նրա ունեցած ընդհանուր կապակցության մեջ, ապա այդ պատկերացումները լուծվում են ընդհանուր փոխազդեցության վերաբերյալ պատկերացման մեջ, վորի մեջ պատճառն ու հետեւ վանքը շարունակ փոխում են իրենց տեղերը, և այն, ինչ-վոր այժմ կամ այսուղ հետևանք և, ուրիշ ժամանակ կամ ուրիշ տեղում կդառնա պատճառ, և ընդհակառակը:

Այդ բոլոր յերեսույթներն ու մտածողության մեթոդները չեն տեղավորվում մետաֆիղիկական մտածողության ըլջանակներում: Իսկ դիմակալիտիկայի համար, վորն իրերը և նրանց մտարտակերները վերցնում ե զիխավորապես նրանց փոխադարձ կապակցության մեջ, նրանց կցման, նրանց շարժման մեջ, նրանց ծագման ու անհետացման մեջ, այնպիսի յերեսույթները, ինչպես վերոհիշյալները, ընդհակառակը, միայն հաստատում են նրա սեփական ժեթողը: Բնությունը զիալեկտիկայի փորձաքարն ե, և ժամանեթողը: Բնությունը զիալեկտիկայի վորոշաքարն է, վոր այդ փորձի համար մի չափանկար յարութափ, յուրաքանչյուր որ մեծացող նյութ և ներկազանում, հենց դրանով ել ապացուցեց, վոր բնության մեջ,

վերջիվերջո, ամեն ինչ կատարվում է դիալեկտիկորեն և վոչ թե մետաֆիղիկորեն, վոր նա շարժվում է վոչ թե հավիտենապես միատեսակ, շարունակ նորից կրկնվող ըրջանում, այլ մի իսկական պատմություն և ապրում: Այսուեղ պետք է, ամենից առաջ, մտանանչել Դարվինին, վորն ամենասաստիկ հարվածը հասցրեց բնության վերաբերյալ մետաֆիղիկական հայացքին, ապացուցելով, վոր ժամանակակից ամբողջ որդանական աշխարհը, բույսերն ու կենդանիները, հետևապես նաև մարդը, զարգացման միլիոնավոր տարիների պրոցեսի արդյունք են: Բայց քանի վոր մինչեւ այժմ կարելի յե մատների վրա հաշվել դիմակալիտիկորեն մտածել սովորած բնագետներին, ապա ձեռք բերված դիտական արդյունքների այդ հակասությունը մտածողության վերը բերված մետաֆիղիկական յեղանակի հետ՝ լիովին բացատրում և այն անսահման խանճաչվությունը, վոր տիրում և այժմ թերիտական բնագիտության մեջ և հավասարապես հուսահատեցնում և ինչպես ուսուցիչներին, այնպես ել աշակերտներին, ինչպես գրողներին, այնպես ել նրանց ընթերցողներին:

Այսպես ուրեմն, տիեզերքի, նրա զարգացման և մարդու զարգացման, ինչպես նաև այդ զարգացման՝ մարդկանց գլուխությունը արտացոլելու մասին ճշգրիտ պատկերացում կարող է ձեռք բերվել միայն դիմակալիտիկայի միջոցով, միայն շարունակ նկատի առնելով ընդհանուր փոխազդումը ծագման ու անհետացման միջև, պրոդրեսսիվ փոփոխությունների ու ուղղեսսիվ փոփոխությունների միջև: Հենց այդպիսի տեսակետի վրա յել կանդենց գերմանական նորագույն փիլիսոփայությունը: Կանտի առաջին գիտական քայլն այն եր, վոր Նյուտոնի արեգակնային սիստեմը, անիովիտի ու հալիտենական սիստեմը, նրանից հետո, յերբ նրան մեկ անգամ առաջին հայտնի զարկը արվեց, մեկրածեց պատճառական պրոցեսի, այսինքն՝ արևի և բոլոր մոլորակների՝ պատվոլ մշուչային մասսայից ծագելու պրոցեսի: Հսուլորում նա հանդեց այն յեղբակացության, վոր արեգակնային սիստեմի ծաղումը յենթադրում և նաև նրա ապագա անհետացումը: Կես գար անցնելուց հետո նրա հայացքը մաթեմատիկորեն հիմնավորեց Լազլասը, իսկ ելի կես դար հետո սպեկտրոսկոպը ցույց տվեց տարբեր աստիճանի խոռությամբ այդպիսի շիկացած գագային մասսաների գոյությունը տիեզերքում:

Իր ավարտումը նորագույն գերմանական փիլիսոփայությունը գտավ Հեղեղի սիստեմի մեջ. Հեղեղի մեծաղույն ծառայությունն այն եր, վոր նա առաջին անգամ ամբողջ բնական, պատճառ

և հոգեոր աշխարհը պատկերացրեց վորապես մի պրոցես, այսինքն՝ անընդհատ շարժման, փոփոխման, փոխակերպման ու զարդացման մեջ, և փորձում եր հայտնալործել այդ շարժման ու զարդացման փոխադարձ ներքին կատը: Այդ տեսակետից մարդկության պատմությունն արգեն զաղարեց այնպիսի անիմաստ բոհությունների մի անհեթեթ կծիկ թվալուց, վորոնք փիլիսոփայական բանականության առաջ լոկ դատապարտության ու ամենաարագ ժողովության ելին արժանի: այդ պատմությունը, ընդհակառակը, ներկայանում եր վորպիս իր իսկ՝ մարդկության զարդացման պրոցես, և գիտական մտքի խնդիրը հանգեց այն բանին, վոր հետազոտի այդ պրոցեսի հաջորդական աստիճանները նրա բոլոր խարխափումների մեջ և առաջուցի նրա ներքին որինաչափությունը թվացող բոլոր պատահականությունների մեջ:

Մեղ համար այստեղ միենույն է, արդյոք Հեղելի սիստեմը լուծեց նրա գրած խնդիրը—նրա մեծ ծառայությունը հենց այդ հարցը զնելն եր: Նրա լուծումը չի կարող մեկ մարդու մտքի գործը լինել: Թեև Հեղելը, Սեն-Սիմոնի հետ, իր ժամանակի ամենառանիվերալ միտքն եր, բայց նա այնուամենայնիվ կաշկանդված եր ինչպիս իր սեփական գիտելիքների անխուսափելի սահմանափակությամբ, այնպիս ել իր դարաշրջանի գիտելիքների ու հայցքների սահմանափակությամբ—խորության ու ծավալի իմաստով: Դրան ավելացավ ելի մի յերրորդ հանդամանք: Հեղելն իդեալիստ եր, այսինքն՝ նրա մտքերը չելին թվում նրան իրականության մեջ գոյություն ունեցող իրերի ու յերեսույթների ավելի կամ պակաս վերացական արտացոլումներ, այլ ընդհակառակը, առարկաներն ու նրանց զարդացումը նրան թվում ելին լոկ վորպիս աշխարհի ստեղծագործությունից գեռ առաջ ինչ-գորտեղում գոյություն ունեցող «իդեալի»¹ մարմնացում: Այդպիսով, ամեն ինչ գլխիվայր դրվեց, և տիեզերական յերեսույթների իրական կապը չւոռ արգեց: Ու թեև Հեղելը քիչ ճիշտ ու հաճարել հետեւություններ չարեց միքանի առանձին յերեսույթների փոխադարձ կապակցության մասին, բայց այնուամենայնիվ մեր հիշառակած պատճառները հասցըին այն բանին, վոր նրա սիստեմի մասնավորությունների մեջ ել շատ բան թվում եր սիստեմ:

¹ «իդեալ», «բացարձակ իդեալ»—Հեղելի փելիսոփայության մեջ այդ անունների տակ թագնված եր աստված: Այդ հասկացողությունները քողարկում ելին «արարչի հավատի մնացորդը»: Խմբ:

արհեստական, բոնազբոսիկ, մի խոսքով՝ աղավաղված: Հեղելյան սիստեմը վորպիս սիստեմ՝ մի վիթխարի վաղածին եր, բայց գրա փոխարեն նաև վերջինն եր իր տեսակի մեջ: Բացի դրանից, այդ սիստեմը տառապում եր անբուժելի ներքին հակասությունից: մի կողմից՝ նրա հիմքն եր կազմում այն համուլմունքը, թե մարդկային պատմությունը զարդացման մի պրոցես է, վորի ընթացքը հենց իր բնույթով չի կարող իր մտավոր ավարտումը դանել այսպես կոչված բացարձակ ճշմարտության հայտնաղործումով, բայց, մյուս կողմից՝ նրա սիստեմը հավակնությունն ուներ հենց այդ բացարձակ սիստեմի շարադրանքը լինելու: Բնույթյան ու պատմության ճանաչման համապարփակ, մի անդամ ընդմիշտ ավարտված սիստեմը հակասում ե դիալեկտիկական մտածողության հիմնական որենքներին, վորը, սակայն, բնավ չի բացառում, այլ, ընդհակառակը, յենթալրում է, վոր ամրող աշխարհի սիստեմատիկ ճանաչումը կարող ե հըսկայական առաջադիմություն անել յուրաքանչյուր սերնդի մեջ ջոցով:

Այն բանի ըմբռնումը, վոր մինչև այն ժամանակները Գերմանիայում իշխող իդեալիզմը կեղծ եր, պետք ե անխուսափելիորեն հանգեցներ մտածերիալիզմին, բայց, հասկանալի յե, վո՛չ XIXIII դարի մետաֆիլիկական, բացառապես մեխանիկական մտածերիալիզմին: Ի հակադրություն ամրող անցած պատմության նախիլ-հեղափոխական, հասարակ ժխտման՝ ժամանակակից մտածերիալիզմը պատմության մեջ ենանում ե մարդկության զարդացման արցես, ընդփորում նրա խնդիրն այդ պրոցեսի որենքների հայտնաղործումն է: Ի հակադրություն բնույթյան՝ XIXIII դարի Փրանսուցիների և դեռ Հեղելի մոտ իշխող պատկերացման, ըստ վորի բնույթյունը միշտ ինքն իրեն հավասար ամրող անցած պատմություն է, վոր անփոփոխ շարժվում ե միենույն սահմանափակ շրջանների մեջ տիեզերական հավիտենական մարմիններով, ինչպիս նրանց մասին նյուտոնն եր ուսուցանում, ժամանակակից մտածերիալիզմը կապակցում՝ մի սիստեմի յե վերածում բնազիտության բոլոր նորագույն հաջողությունները, վորոնց համաձայն բնույթյունն ել իր պատմությունն ունի ժամանակի մեջ, յերկնային մարմինները, ինչպիս և նպաստավոր պայմաններում նրանց վրա բնակվող որդանիզմների բոլոր տեսակները ծալում ու անհետանում են, և այդ շրջանաձեւ

շարժումները, վորքան վոր մենք ընդհանրապես հնարավոր ենք՝ Համարում դրանք, անսահման մեծ չափեր են ընդունում: Յերկու դեմքում ել մատերիալիզմն ըստ եյության գիտեկտիկական և և մյուս գիտություններից վեր կանգնած փիլիսոփայության կարիքը չի զգում: Յերբ յուրաքանչյուր առանձին գիտության առաջ պահանջ և գրվում պարզելու իր տեղը իրերի ու գիտելիքների ընդհանուր սիստեմում, նրանց այլ ընդհանուր կապակցության վերաբերյալ վորև հատուկ գիտություն ավելորդ ե դառնում: Յեզ այն ժամանակ ամբողջ առաջվա փիլիսոփայությունից ինքնուրույն նշանակություն և պահպանում միայն մտածողության և նրա որևէնքների վերաբերյալ գիտությունը, այսինքն՝ Փորմալ տրամաբանությունը և գիտականիկան, իսկ մնացած ամեն ինչ մտնում ե բնության ու պատմության վերաբերյալ գրական գիտությունների մեջ:

Բայց մինչեւ վերօհիչյալ հեղաշրջումը բնագիտական աշխարհացքի մեջ կարող եր կատարվել միայն այն չափով, վոր չափով հետազոտությունները համազատասիման դրական դիտելիքներ եյին մատակարարում, —արդեն դրանից բավական առաջ պատմական այնպիսի անցքեր կատարվեցին, վորոնք վճռական հեղաշրջում առաջացրին պատմության ըմբռնման մեջ: 1831 թ. իրունում տեղի ունեցավ առաջին բանվորական ապստամբությունը¹. 1838 թ. մինչեւ 1842 թ. առաջին ազգային բանվորական շարժումը, անդիւհական չարտիստների շարժումը², իր գաղաթնականին հատալ: Դասակարդային պայքարը բուրժուազիայի ու

¹ Կիսմի բանվոր-ջուրհակների 1831 թ. պատամբությունը ֆրանսիայուժ պատասխան եր բանվորական ցույցի գնդակահարման, վոր տեղի ունեցավ աշխատավարձի մինիմում սահմանելու համար արիած գործադուլիք ժամանակ: Ապատամբած բանվորներն ամբողջ քաղաքում բորբկադներ կանգնեցրին, մի քանի որ շարունակ ամբողջ քաղաքն իրենց ձեռքում եյին պահում և ընկճվեցին միայն այն ժամանակ, յերբ կառավարությունը կիսմի բուրժուազիային սպնելու համար կանանցը զորքեր ուղարկեց: Խմբ:

² Զարդարական շարժումն Անգլիայում տեղի ուներ անցյալ դարի 30—40-ական թվականներին: Այդ շարժումն ընդգրիկ անդիւհական բանվոր դասակարգի հոկտեմբերի մեծամասնությունը և ոլորդիտարիատի առաջին ինքնուրույն հաղաքական շարժումն եր: Հենց այդ եր, ինչպես ժամանակել են Մարքսը, ենդեւս և Լենինը, նրա պատմական վեթիարի նշանակությունը: Այդ շարժումն իր անունը («Հարտիստական») ստացել ե բանվորների կողմէց 1839 թվի պառլամենտին տրված Խարտիայից (Զարտերից), վորը շարադրում եր նրանց հիմնական հետեւյալ պահանջները. — 1) ընդհանուր ընտրական իրավունք, 2) ամեն տարի վերընտրված պատվամենտ, 3) պառլամենտի անդամներին ուղիղ վճարել, 4) գաղտնի քիմարկություն պարագաներական ընտրությունը:

պրոլետարիատի միջև սկսեց առաջին տեղը գրավել Յեվրոպայի ամենազարգացած յերկրների պատմության մեջ այն չափով, վոր չափով զարգանում եր, մի կողմից, խոչոր արդյունաբերությունը, իսկ մյուս կողմից—բուրժուազիայի քաղաքական նոր ձեռք բերած տիրապետությունը: Փաստերն ավելի ու ավելի մեծ ակնառությամբ եյին ցույց տալիս բուրժուական եկոնոմիայի վերաբերյալ ուսմունքի ամբողջ կեղծությունը կապիտալի ու աշխատանքի շահերի նույնության, ընդհանուր հարմոնիայի և ժողովրդի ընդհանուր բարեկեցության մասին, վորը իբր թե պետք ե ազատ մրցության հետևանքը լիներ: Արդեն անկարելի յեր հաշվի չառնել այդ փաստերը, ինչպես նաև ֆրանսական ու անգլիական սոցիալիզմը, վորն այդ փաստերի թեորիական, ճիշտ և չափազանց անկատար, արտահայտությունն եր: Բայց պատմության հին, իդեալիստական, զեռևս զուրս չմղված ըմբռնումը նյութական շահերի վրա հիմնված վոչ մի գասակարգային պայքարը չեր ճանաչում, ինչպես առհասարակ նա վոչ մի նյութական շահ չեր ընդունում: Արտադրությունը, ինչպես և տնտեսական բոլոր հարաբերությունները, հիշատակվում եր լոկ ի միջի այլոց, վորպես «կուլտուրական պատմության» յերկրորդական տարրեր:

Նոր փաստերն ստիպեցին ամբողջ նախկին պատմություննոր հետազոտության յենթարկելու, և այդ ժամանակ պարզից, վոր ամբողջ նախկին պատմությունը, բացի նախնադարյան վիճակից, գասակարգային պայքարի պատմություն և յեղել, վոր միմյանց զեմ պայքարող հասարակական գասակարգերը յուրաքանչյուր տվյալ մոմենտում արտադրության ու կրոխանակության յեղանակների, մի խոսքով—իբրեւ ժամանակի տնտեսական հարաբերությունների արդյունք են: Յուրաքանչյուր տվյալ դարաշրջանի հասարակության տնտեսական կառուցվածքն այն ունալ հիմքն ե, վորի հատկություններով և բացարվում վերջին հաշվով պատմական յուրաքանչյուր իրավական ու քաղաքական հաստատությունների, ինչպես նաև կրոխական, փիլիսոփայական և այլ հայացքների ամբողջ վերնաշները: Հեղելը մետաֆիլիկայից աղատեց պատմության ըմբռնումը. նա այդ ըմբռնումը դարձեց

թությունների ժամանակ, 5) բնտրական համաստար շրջաններ, 6) պատշաճագորների համար գույքային ցնդի վերացում: Այդ պահանջների համար գույքարն Անգլիայի բանվոր դասակարգը մզում եր մի քանի տարի շարունակ պետիցիաների, գործադրուների, ցույցերի և զոստիկանության հետ զինված ընդհարումների միջոցով: Խմբ:

գիալեկտիկական, բայց պատմության վերաբերյալ նրա սեփական հայացքն իդեալիստական եր ըստ եյության: Այժմ իդեալիզմը վտարվեց իր վերջին ապաստարանից, պատմության բնագավառից, այժմ՝ պատմության ընմթունումը դարձավ մատերիալիստական, այժմ՝ գտնված եր ճանապարհը մարդկային գիտակցությունը կեցության պայմաններով՝ բացատրելու՝ կեցությունը առաջիւ նման մարդկային գիտակցությամբ բացատրելու վոխարեն:

Այդ պատճառով ել սոցիալիզմն այժմ մրդեն չի համարվում այս կամ այն հանճարեղ մտքի հայտնագործում, այլ վորպես պատմականութեն ծագած յերկու դասակարգերի՝ պրոլետարիատի և բուրժուազիայի սրայքարի անխուսակելի հետեւանք: Նրա խնդիրն այլև այն չե, վոր ըստ հնարավորին ավելի կատարյալ հասարակակարգ հնարի, այլայն, վոր հետազոտի այն պատմական-տնտեսական պրոցեսը, վորի անհրաժեշտ հետևանքն են յեղել հիշյալ դասակարգերն իրենց փոխադարձ պայքարով, և վորպեսդի այդ պրոցեսի ստեղծած տնտեսական կացության մեջ այդ պայքարը լուծելու միջոց գտնի: Բայց նախկին սոցիալիզմը նույնպես անհամատեղելի յեր այդ մատերիալիստական պատմահայացքի հետ, ինչպես վոր դիալեկտիկայի և նորագույն բնագիտության հետ անհամատեղելի եին Փրանսական մատերիալիստների հայացքները բնության նկատմամբ: Նախկին սոցիալիզմը, թեև քննադատում ել եր զոյտություն ունեցող կապիտալիստական արտադրայեղանակը և նրա հետևանքները, բայց չեր կարողանում բացատրել այդ և, հետևաբար, ի վիճակի չեր հաղթահարել այդ յեղանակը, նաև կարող եր միայն բոլորովին անպետք հայտարարել այն: Վորքան ավելի խիստ եր նա ծառանում արտադրության այդ յեղանակի ժամանակ անխուսակելի՝ բանվոր դասակարգի շահագործման դեմ, այնքան նա ավելի քիչ եր ի վիճակի ակնառու կերպով բացատրելու, թե ինչ բան է այդ շահագործումը և ինչպես ե առաջանում: Բայց խնդիրն այն եր, վր, մի կողմից, բացատրվեր արտադրության կապիտալիստական յեղանակի ծագման և պատմական վորոշ շրջանի հետ նրա ունեցած պատմական կապի անխուսակելիությունը, ուստի և նրա կործանման անխուսակելիությունը, իսկ մյուս կողմից—այն եր, վոր մերկացվեր արտադրության այդ յեղանակի ներքին, մինչև այդ չհայտնաբերված բնույթը: Այդ արվեց չնորհիլ հավելյալ արժեքի հայտնագործման: Աղացուցվեց, վոր չհատուցված աշխատանքի յուրացումը արտադրության կապիտալիստական յեղանակի և նրան հա-

տուկ՝ բանվորների շահագործման հիմնական ձևն ե. վոր նույնիսկ այն դեպքում, յերբ կապիտալիստը աշխատանքային ուժեւը գնում է այն լրիվ արժեքով, վոր այդ ուժը, վորպես ապրանք, ունի չուկայում, կապիտալիստն այնուամենայնիվ այդ ուժից ավելի արժեք է հանում, քան նա վճարել է այդ ուժի համար, և վոր այդ հավելյալ արժեքն ել վերջիվերջո կազմում է արժեքների այն դումարը, վորից ուներ դասակարգերի ձեռքում կուտակվում է կապիտալիստը շարունակ անող մասսան: Այդպիսով, պարզվեց արտադրության կապիտալիստական յեղանակի ծագումը, ինչպես նաև հենց իր՝ կապիտալի արտադրությունը:

Այդ յերկու մեծ հայտնագործումները—պատմության մատերիալիստական ըմբռնումը և հավելյալ արժեքի միջոցով կապիտալիստական արտադրության գաղտնիքի մերկացումը—մենք պարտական ենք Մարքսին: Դրանց չնորհիլ սոցիալիզմն այժմ գարձել է գիտություն, վորը հետազոտի պետք է միայն մշակել իր բոլոր մանրամասնություններով և այդ մանրամասնությունների փոխադարձ կապակցությամբ:

III

Պատմության մատերիալիստական ըմբռնումը յելնում է այն գրույթից, վոր արտադրությունը, իսկ արտադրությունից հետո նաև պրոդուկտների փոխանակությունը ամեն մի հասարակակարգի հիմքն են ծառայում: Վոր յուրաքանչյուր պատմական հասարակության մեջ պրոդուկտների բաշխումը, իսկ զրա հետ միասին նաև հասարակության բաժանումը դասակարգերի կամ դասերի կախված է նրանից, թե ինչպես և ինչ ե արտադրում այդ հասարակությունը, և ինչ յեղանակով են փոխանակվում արտադրության պրոդուկտները: Այստեղից հետեւում է, վոր սոցիալական փոփոխությունների և քաղաքական հեղաշրջումների արմատական պատճառները պետք է փնտուել վո՛չ թե մարդկանց գլխում, վո՛չ թե հավիտենական ճշմարտության ու արդարության նրանց անող ըմբռնման մեջ, այլ արտադրության ու փոխանակության յեղանակների փոփոխությունների մեջ. այլ խոսքով՝ վո՛չ թե ավյալ գարագրանի փլիստիայության, այլ եկնումիայի մեջ: Գոյություն ունեցող հասարակական կառուցվածքի անբանականության ու անարդարության արթնաշամ գիտակցությունը, թե «իմաստությունը անմտություն է գարձել, բարիքը չարիք», միայն այն բանի մատնանշումն է, վոր արտադրության

մեթոդների և փոխանակության ձևերի մեջ աննկատելիորեն կատարվել են այնպիսի փոփոխություններ, վորոնց արդեն չի համապատասխանում հին տնտեսական պայմանների չափառվ ձևած հասարակակարգը: Ասածներիցս սպարզ ե, վոր գիտակցված շարիքի վերացման միջոցներն ել պետք ե—ավելի կամ սպակառ զարգացած ձևով—արտադրության հենց փոփոխված պայմանների մեջ պարունակվեն: Մարդկային միտքը չի կարող հնարի այդ միջոցները, նա պետք ե հայտնագործի դրանք արտադրության ավյալ նյութական փաստերի մեջ:

Իսկ ի՞նչ կարող ենք ասել մենք դրա հիման վրա արդի սոցիոլիգի մասին:

Ամենքն ել ընդունում են, վոր գոյություն ունեցող հասարակակարգը այժմ իշխող դասակարգի—բուրժուազիայի ստեղծածն է: Արտադրության՝ բուրժուազիային հատուկ յեղանակը, վոր Մարքսի ժամանակից կապիտալիստական և կոչվում, անհամատեղելի յեր տեղական և դասային արտոնությունների հետ, ինչպես նաև ֆեոդալական հասարակակարգի անձնական կապերի հետ-բուրժուազիան խորտակեց ֆեոդալական կարգերը և նրանց փլուակների վրա կառուցեց բուրժուական հասարակակարգը, ազատ մրցության, տեղափոխության աղատության, ապրանքատերերի իրավահավասարության, մի խոսքով՝ բուրժուական բոլոր հրաշալիքների թափավորությունը: Արտադրության կապիտալիստական յեղանակն այժմ կարող եր աղատ կերպով դարձանալ: Սկսած այն ժամանակից, յերբ շողին ու մեքենաները հին մանուֆակտուրան վերածեցին խոչոր արդյունաբերության, բուրժուազիայի կառավարչության ներքո մշակված արտադրողական ուժերն ունեցին առաջներում չլսված արագությամբ ու չտեսնալած չափերով զարգանալ: Բայց ճիշտ այնպես, ինչպես մանուֆակտուրան և նրա աղդեցության տակ կատարելագործված արհեստները յերբեմն բաղվավեցին ցեխային կարգերի ֆեոդալական կապանքների հետ, խոչոր արդյունաբերությունն իր զարգացման ավելի բարձր աստիճանում սկսում ե բաղիւել այն նեղ շրջանակների հետ, վորոնց մեջ ե խցկում նրան արտադրության կապիտալիստական յեղանակը: Արտադրողական նոր ուժերն արդեն աճել-աճել են իրենց շահագործման բուրժուական ձևերից: Յեզ այդ կոնֆլիկտն արտադրողական ուժերի և արտադրության յեղանակի միջև ամեննեխն ել այնպիսի կոնֆլիկտ չե, վորը գոյություն ունի միայն մարդկանց գլխում, —ինչպես նախածին մեղքի և առտվածային արդարության միջև յեղած կոնֆլիկտը, —այլ դոյություն

ունի իրականության մեջ, որյեկտիվորեն, մեղնից դուրս, անկատ նույնիսկ այն մարդկանց կամքից ու վարքից, վորոնց գործառնեցությամբ ստեղծված և այդ կոնֆլիկտը: Արդի սոցիալիզմը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ այդ փաստական կոնֆլիկտի մտային արտացոլումը, նրա իդեալական արտացոլումն ամենից առաջ այն դասակարգի գլխում, վորն այդ կոնֆլիկտից տուժում և անմիջաբար՝ բանվոր դասակարգի գլխում:

Իսկ ի՞նչ բան ե այդ կոնֆլիկտը:

Կապիտալիստական արտադրության յերևան գալուց առաջ, այսինքն՝ միջին դարերում, ամենուրեք գոյություն ունեն մանր արտադրություն, վոր հիմնված եր արտադրության գործիքների մասնավոր սեփականության վրա. գյուղում իշխում եր մանր, ազատ կամ ճորտ դյուղացիների հողադրծությունը, քաղաքում—արհեստը: Աշխատանքի գործիքները—հողը, հողադրծական գործիքները, արհեստանոցներն ու ձեռքի գործիքները—առանձին անձերի աշխատանքի գործիքներն եյին, միայն անհատական գործառության համար պատրաստված, և հետեւակեան հրաժեշտաբար մնում եյին մանր, չկատարելագործված, սահմանափակ: Բայց այդ ստանառով ել նրանք հենց իրենց՝ պատճառով ներին եյին պատկանում: Կենտրոնացնել, խոշորացնել արտադրության այդ ցիրուցան, մանր միջոցները և դրանք զարձել արտադրության ժամանակակից հզոր լծակներ—այս եր արտադրության կապիտալիստական յեղանակի և նրա կրողի՝ բուրժուազիայի պատմական գերը: Տե նա ինչպես պատմականորեն կատարեց այդ գերը՝ սկսած ԽՎ դարից, արտադրության յերեք տարբեր աստիճաններում, այն ե՝ պարդ կոռպերացիայի, մանուֆակտուրայի և խոչոր արդյունաբերության ժամանակ, —մանրամասն նկարագրված և Մարքսի «Կապիտալի» IV հատվածում¹: Բայց հենց այնտեղ ել ցույց ե տրված, վոր արտադրության սահմանափակ միջոցները ժամանակակից վիթխարի արտադրողական ուժերի վերածել բուրժուազիան չեր կարող, առանց արտադրության առանձին մասնավոր անձերի պատկանող միջոցները հանրային միջոցների վերածելու, վորոնք միայն մարդկանց ամբողջ կոլեկտիվի ջանքերով են գործադրվում: Ճախարակի, ջուլհակի ձեռքի

¹ Ենդեւան այստեղ ժամանանչում և Մարքսի «Կապիտալի» I հատ., վորք մեջ IV հատվածում (XII, XIII և XIII գլուխները) շարադրված և արտադրության զարգացման պատմությունը մանր արհեստից զեօքի խոչոր մեղնական արդյունաբերությունը: Զարգացման այդ ընթացքը Մարքսը ժամանակում և XXIV գլխում: Խմբ.:

գաղղյահի, դարբնի մուրճի փոխարեն դուրս յեկան մանող մեքե-նան, մանածագործական հաստոցը, չողեմուրճը. փոքրիկ արհես-առանցների փոխարեն—հսկայական զործարաններ, վորոնք հար-յուրավոր և հաղարավոր բանվորների միացյալ աշխատանք եյին պահանջում: Արտադրության միջոցների նման՝ նաև ինքն ար-ապարությունը միավորների մի շարք ջլատված ջանքերից վերած-վեց մի շարք հանրային դործողությունների, իսկ պրոդուկտնե-րը—առանձին անհատի արտադրությունից՝ հանրային պրո-դուկտների: Մանածաթելը, գործվածքները, մետաղե ապրանք-ները, վորոնք այժմ զործարաններից են դուրս գալիս, այն բաղ-մաթիվ բանվորների միատեղ աշխատանքի արդյունքն են, վորոնք հերթով իրենց ջանքերն են դրծագրել նրանց վրա, մինչև վոր, վերջապես պատրաստի իրեր են ստացվել: Վոչ վոք առանձին չի կարող ասել նրանց մասին—«Այս յես եմ շինել, այս իմ պրոդուկ-տըն ե»:

Բայց այսուղ, վորտեղ արտադրության հիմնական ձեւ ոչ-խատանքի տարերային, աստիճանաբար՝ առանց պլանի առաջա-ցած բաժանումն ե հասարակության մեջ, այսուղ պրոդուկտներն անխուսափելիորեն ապրանքների ձեւ են ընդունում, վորոնց փո-խանակումը, զնումն ու վաճառումը առանձին արտադրություններին հնարավորություն ե տալիս իրենց բազմազան պահանջները բա-վարարելու: Հենց այդպես ել յեկել ե միջին դարերում: Որինակ, գյուղացին արհեստավորին հողագործական մթերքներ եր ծա-խում և նրանից արհեստի արտադրանքներ եր զնում: Ապրանքար-ապրոդմենաշխատների այդ հասարակության մեջ ել սեպից արտադրության նոր յեղանակը: Ամբողջ հասարակության մեջ աշխատանքի բաժանման տարերային, առանց վորեն պլանի ստեղծված, տիրող ձեի մեջ այդ յեղանակը մտցրեց աշխատանքի բաժանման մի նոր՝ առանձին դործարանում պլանով կաղմա-կերպված ձեւ, մասնավոր արտադրության կողքին հանդես յեկավ հանրային արտադրությունը: Թե՛ մեկի և թե՛ մյուսի արտա-դրանքները վաճառվում եյին միևնույն շուկաներում, հետեւապես և, գոնեւ մոտավորապես հայտար գներով: Բայց պլանային կաղ-մակերսությունն ավելի հզոր դուրս յեկավ, քան աշխատանքի տարերային բաժանումը. հանրային զործարանային աշխատանքի պրոդուկտները մանր, անջատ-անջատ արտադրուզների պրոդուկտներից առանձին միջոցներից ավելի եժան եյին: Մասնավոր արտադրությունը պարտու-թյուն պարտության հետեւից եր կրում, հանրային արտադրու-թյունը հեղափոխականացնում եր, վերջապես, արտադրության

ամբողջ հին յեղանակը: Հանրային արտադրության հեղափոխա-կան բնույթը, սակայն, այնքան քիչ եր զիտակցվում, վոր նա, ընդհակառակը, մացլում եր հատկապես ապրանքային արտա-դրությունն ուժեղացնելու և խրախուսելու համար: Նա առաջ յեկավ ապրանքների արտադրության ու փոխանակման հայտնի, նրանից առաջ արդեն գոյություն ունեցող լծակների հետ անմիջական կապակցությամբ: այդ լծակներն եյին առևտրական կառլիտալը, արհեստները և վարձու աշխատանքը: Վորովհետեւ նա հանդես յեկավ վորպես ապրանքային արտադրության նոր ձեւ, ապրանքային արտադրությունը հատուկ յուրացման ձեւերը նրա համար նույնպես պահպանեցին իրենց լրիվ ուժը:

Ապրանքային արտադրության այն ձեւի ժամանակ, վոր գո-յություն ուներ միջին դարերում, այն հարցը, թե ում պետք ե պատկանեն աշխատանքի պրոդուկտները, ծագել անդամ չեր կա-րող: Նրանք յուրաքանչյուր առանձին, արտադրողի ձեռքով պատ-րաստվում եյին սովորաբար սեփական նյութից, վորը հաճախ նա հենց ինքն եր արտադրում սեփական գործիքներով և սեփա-կան ձեռքերով կամ ընտանիքի ձեռքերով: Այդպիսի արտադրողը կարիք չուներ յուրացնելու իր պրոդուկտները, նրանք նրան եյին պատկանում գործի բուն իսկ եյությամբ: Հետևապես, պրո-դուկտների սեփականության իրավունքը սեփական աշխատանքի վրա յեր հիմնվում: Մինչև անդամ այնտեղ, վորտեղ կողմնակի սպնություն տեղի ուներ արտադրության մեջ, այդ ոպնությունը մեծ մասամբ միայն յերկրորդական դեր եր իսպում և հաճախ միմիայն աշխատավարձով չեր հատուցվում: Ենթային աշխակերտը և յենթավարպետը աշխատում եյին վոչ այնքան վարձա-տրության կամ ապրուստի համար, վորքան իրենց սեփական ուսուցման և ինքնուրույն վարպետի կոչման պատրաստվելու հա-մար: Բայց ահա սկսից արտադրության միջոցների համակենտ-րունացումը մեծ արհեստանոցներում ու մանութակտուրաներում, նրանց իսկապես փոխակերպումը արտադրության հանրային մի-ջոցների: Յեղ արտադրության այդ հանրային միջոցների ու պրո-դուկտների հետ շարունակում եյին այնպես վարպետ, կարծես թե նրանք առաջիւ նման մնում եյին վորպես առանձին անձերի արտադրության միջոցներ և աշխատանքի պրոդուկտներ: Յեթ մինչև այժմ աշխատանքի գործիքների սեփականատերը, վոր-պես կանոն, յուրացնում եր իր սեփական աշխատանքի պրոդուկ-տը, վորի մեջ ուրիշի աշխատանքի գործիքների սեփականատերը, վոր-

եր մասնակցել, ապա այժմ աշխատանքի գործիքների սեփականատարանը շարունակում եր յուրացնել պրոդուկտները, թեև նրանք արտադրվում եյին արդեն վո՛չ թե նրա, այլ բացառապես ուրիշի աշխատանքով: Այսպիսով, հանրային աշխատանքի սլրողուկտները սկսեցին յուրացնել վո՛չ թե նրանք, ովքեր փաստորեն շարժման մեջ եյին գնում արտադրության միջոցները և սլրողուկտների ինկական արտադրողներն եյին, այլ կապիտալիստները: Արտադրության միջոցներն ու արտադրությունն ըստ եյտթյան դարձան հանրային. բայց նրանց յենթարկեցին յուրացման այն ձեին, վորի նախադրյալը առանձին արտադրողների մասնավոր արտադրությունն ե, յերբ ամեն մեկը, հետեւապես, իր պրոդուկտի տերն եւ այն շուկա յի հանում: Արտադրության նոր ձեւը յուրացման արդ ձեին և յենթարկվում, չնայած վոր առաջինը վերացնում և վերջինի նախադրյալները¹:

Այդ հակասությունը, վոր արտադրության նոր յեղանակին նրա կապիտալիստական բնույթը հազորդեց, իր մեջ պարունակում եր այժմեականության բալոր բաղխումները սաղմային վիճակում: Յեվ վորքան ավելի լրիվ եր դառնում արտադրության նոր յեղանակի տիրապետությունն արտադրության բոլոր վճռողական ճյուղերում, տնտեսապես ամենաարդեցիկ բոլոր յերկրներում, դրանով ել հենց ե'լ ավելի դուրս մղելով անհատական արտադրության մնացորդները, այնքան ավելի սուր կերպով պետք է յերկան գար հանրային արտադրության անհամատեղիությունը կապիտալիստական յուրացման հետ:

Առաջին կապիտալիստները, ինչպես մենք տեսանք, վարձու աշխատանքի ձեւն արդեն պատրաստ դատան: Բայց վարձու աշխատանքը դոյլություն ուներ լոկ բացառության ձեռվ, վորպես մի կողմանի զբաղմունք, անցողիկ դրություն բանվորի համար:

¹ Ինքնին հասկունալիք յե, վոր յեթե յուրացման ձեւ մնում ել և տուած վանքը ապա նրա բնույթը վերը նկարագրած պրցեսի հետևանքով հեղափոխականանում ե վոչ պահառ չափով, քան հենց իր՝ արտադրության բնույթը: Մեծ տարբերություն կա—արդյոք յես իմ սեփական, թե ուրիշի աշխատանքի պրոցեսին եմ յուրացնում: Հարեւանցիորեն նկատենք, վոր վարձու աշխատանքը, վորի մեջ սաղմային ձեռվ թափնված և արտադրության ամբողջ կոպիտալիստական յեղանակը, չատ վաղ ժամանակներից գոյություն ունի: Յեզակի, պատահական ձեռվ մենք այդ յեղանակին հանդիպում ենք դարերի ընթացքում ստրկության հետ միասին: Բայց թագնված սաղմը չեր կարող զարգանալ ու զառնալ արտադրության կապիտալիստական յեղանակ, մինչև չհասունացին նրա համար անհրաժեշտ պատմական պայմանները: (Ենգիսի ծառը-դրագությունը):

Դամանակ առ ժամանակ որավարձով աշխատելու համար վարձովով հողագործն ուներ իր սեփական մի կտոր հողը, վորի արդյունքներով նա մի կերպ կարողանում եր իր գոյությունը պահպանել: Յեխային կանոնագրությունները հոգ եյին տանում այս ժամանի, վորպեսողի այսորվա յենթավարպետը վաղը վարպետ զատնա: Բայց ամեն ինչ փոխվեց, հենց վոր արտադրության միջոցները հանրային բնույթը ընդունեցին և կենտրոնացան կապիտալիստների ձեռքում: Մանր անհատական արտադրողների արտադրության ժիջոցները և պրոդուկտները հետզհետե ավելի եյին արժեքագուրքում էին նախանձեւ, և նրանց տերերին ուրիշ վոչինչ չեր մնում, բացի կապիտալիստների մոտ վարձվելուց: Առաջ վորպես բացառություն և ոժանդակ զբաղմունք գոյություն ունեցող վարձու աշխատանքը դարձավ ամբողջ արտադրության ընդհանուր կանոնը, հիմնական ձեւը, կողմնակի զբաղմունքից նա դարձավ բանվորների միակ զբաղմունքը: Ժամանակ առ ժամանակ վարձվեղ բանվորը դարձավ կարձող բանվորը դարձավ ամբողջ վարտադրության մասնակի խորհրդական մասնակի մասնակի վանիկում մասնակությունը կենտրոնացած միջոցների մասնակությունը հանդարձական հասարակարդը, ֆեոդալների չքախմբերը ցրվեցին, գյուղացիներն արտաքսվեցին իրենց նստոցներից (յսածենք) և այլն: Տեղի ունեցավ կատարյալ խողում արտադրության՝ կապիտալիստների ձեռքում կենտրոնացած միջոցների և բացի աշխատանքային ուժից՝ ամեն բանից զրկված արտադրողների միջև: Հակասուր յունը հանրային արտադրության և կապիտալիստական յուրացման միջև յերկան յեկավ վորպես հակադրություն պրակտարիատի և բուրժուազիայի միջև:

Մենք տեսանք, վոր կապիտալիստական արտադրությունը սեպիկ հասարակության մեջ, վոր կազմված եր միայն իրենց պրոդուկտների փոխանակման միջոցով փոխադարձաբար հանրութեն կազմված առանձին ապրանքատարպերներից: Բայց ապանքների արտադրության վրա հիմնված ամեն մի հասարակության առանձնահատկությունն այն ե, վոր նրա մեջ արտադրութները կորցնում են իշխանությունը իրենց սեփական հասարակական հարաբերությունների վերաբերմանը: Ամեն մեկն իր համար և արտադրում, վորքան թույլ են տալիս փոխանակման իր առանձին կարիքը բավարարելու համար նրա արամագրության տակ պատահարար յեղած արտադրության միջոցները: Վոչ վոք չպիտե, թե ինչքան կհանվի չուկա այն ապրանքից, վոր նա արտադրում ե, և թե ինչ քա-

նակությամբ սպառողներ կարող ե գտնել նա . վոչ վոք չդիտե ,
թե իր ապրանքն սպառող կտնի՞ արդյոք . այդ ապրանքն
արդյոք կարգարացնի՞ իր ծախքերը , և առհասարակ կծախվի՞ , թե
վոչ : Հասարակական արտադրության մեջ անարխիա յե տիրում :
Բայց ապրանքային արտադրությունը , ինչպես և արտադրության
ամեն մի այլ ձև , ունի իրեն հատուկ և իրենից անբաժան
սրենքները , վորոնք , հակառակ անարխիայի , հանդես են գալիս
նրա մեջ , նրա միջոցով : Այդ որենքները յերեան են զալիս հան-
րային կապակցության միակ պահպանված ձեռվլ—փոխանակու-
թյան մեջ—և արտադրողների վրա ներդրծում են վորպես կոն-
կուրենցիայի հարկադիր որենքներ : Իրենց՝ արտադրողներին
նրանք սկզբում անծանոթ են և նրանց համար պարզվում են մի-
այն աստիճանաբար , յերկար փորձի միջոցով : Հետևապես , նրանք
իրենց համար ճանապարհ են հարթում առանց արտադրողների
մասնակցության և հակառակ արտադրողների , վորպես արտա-
դրության նրանց (արտադրողների) ձեռ՝ կուրորեն գործող բնա-
կան որենքներ : Պրոդուկտն իշխում և արտադրողների վրա :

Միջնադարյան հասարակության մեջ , մանավանդ առաջին դա-
րերում , արտադրությունը զլավլորապես սեփական սպառման հա-
մար եր : Նա ամենից առաջ հենց արտադրողի ու նրա ընտանիքի
կարիքներն եր բավարարում : Խոկ այստեղ , վորտեղ , ինչպես հո-
գագործության մեջ , անձնական կախում գոյություն ուներ , ար-
տադրությունը բավարարում եր նաև Փեոլալի կարիքները : Հե-
տեւապես , այստեղ փոխանակություն գոյություն չուներ , և պրո-
դուկտները ապրանքի բնույթ չեյին ընդունում : Գյուղացիական
ընտանիքն ինքն եր արտադրում իրեն պետք յեղածը—գործիքնե-
րը և հագուստը , ինչպես նաև կերպերը : Ծախելու համար ար-
տադրել եր սկսում նա միայն այն ժամանակ , յերբ նրա մոտ
ավելցուկ եր մնում սեփական սպառումից , և տիրոջը հասանելի-
քնալիքականները վճարելուց հետո . փոխանակության հանված այդ
ավելցուկը ապրանք եր գառնում : Քաղաքային արհեստավորներն
իհարկե , պետք ե հենց սկզբից փոխանակության համար արտա-
դադրելին : Բայց նրանք իրենք ել արտադրում եյին սեփական
սպառման համար պետք յեղած առարկաների մեծ մասը , նրանք
պարտեղներ ու փոքր դաշտեր ունեյին , իրենց անասուններին արտ-
ածացնում եյին համայնական անտառում , վորը , բացի դրանից ,
նրանց շինայութ և վառելիք եր մատակարարում . կանայք վուշ
և բուրդ եյին մանում և այլն : Փոխանակության նպատակով կա-
տարվող արտադրությունը , ապրանքների արտադրությունը դեռ

նոր-նոր եր առաջանում : Այստեղից—փոխանակության սահմանա-
փակությունը , շուկայի սահմանափակությունը , արտադրության
կայուն յեղանակը , տեղական պարփակվածությունն արտաքին
աշխարհի նկատմամբ , սերտ միասնությունը տեղական միջավայ-
րում , մարկը գյուղերում , ցեխերը քաղաքներում ¹ :

Սակայն ապրանքային արտադրությունն ընդարձակվելով և
մանավանդ արտադրության կապիտալիստական յեղանակը հրա-
պարակ դալով՝ ապրանքային արտադրության մինչև այդ նիրհող
որենքներն սկսեցին ավելի մեծ ուժով ու պարզությամբ գործել :
Հին միությունները յերեացին , նախկին պարփակվածությունը
ճեղքվեց , և արտադրողներն ավելի ու ավելի եյին դառնում
բաժան-բաժան ու անկախ ապրանք արտադրողներ : Հանրային
արտադրության անարխիան հրապարակ յեկավ և հետզհետե ավե-
լի մեծ չափեր եր ընդունում : Մինչդեռ այն ամենագլխավոր գոր-
ծիքը , փորի ոգնությամբ կապիտալիմն ուժեղացնում եր անար-
խիան հանրային արտադրության մեջ , անարխիայի ուղղակի հա-
կադրությունները : Այդ գործիքը արտադրության հանրային կագ-
մակերպության ուժեղացումն եր յուրաքանչյուր առանձին ար-
տադրական ձեռնարկությունում : Այդ լծակի ոգնությամբ արտա-
դրության կապիտալիստական յեղանակը վերջ տվեց հին խաղաղ
կայունությանը : Թափանցելով արդյունաբերության ամեն մի
ճյուղի մեջ , նա այստեղից գուրս եր մղում արտադրության հին
մեթոդները : Արհեստին տիրելով՝ նա վոչչացնում եր հին ար-
հեստը : Աշխատանքի դաշտը ճակատամարտի դաշտ դարձալ : Աշ-
խարհագրական մեծ զյուտերը ² և նրանց հաջորդող գաղութացու-
մը մի քանի անդամ մեծացրին վաճառահանման բնագալառը և
արագացրին արհեստի փոխակերպումը մանուֆակտուրայի : Պար-
քարն արդեն չեր սահմանափակվում տեղական յեղակի արտա-
դրողներով . տեղական պայքարը սաստիացավ , իր հերթին , հաս-
նելով ապահային պայքարի չափերի , դառնալով XVII և XVIII դա-

1 Մարկ , այսինքն՝ հոգային համայնք : Տե՛ս Ենդեւսի «Մարկը» հոդվա-
ծը : Կարլ Մարկ և Փ. Թիգելս , Յերկի , և . XV , էջ 627—645 , Պարտիզատ :
Հրատարակված ե նաև առանձին բրույրով : Խմբ :

2 Աշխարհագրական մեծ զյուտերը վերաբերում են XV դարի յերեարդ
կեսին և XVI դարի առաջին կեսին : Նրանցից կարեռագույններն են Ամերի-
կայի զյուտը Քրիստոնիուր Կոլումբոսի հօդմից 1492 թ . և Հնդկաստանի ծո-
վային ճանապարհի հայտնագործումը պորտուգալացի Վասկո-դե-Գամայի կող-
մից 1498 թվականին : Խմբ :

բների առևտրական պատերազմներ։ Վերջապես, խոչը արդյուն-
նաբերությունը և համաշխարհային շուկայի առաջացումն այդ
պայքարը դարձրին ընդհանուր և միևնույն ժամանակներան տվին
լլսված լարվածություն։ Արտադրության բնական կամ արհես-
տականորեն ստեղծված շահավետ պայմաններին տիրապետելուց
և կախված այժմ վո՛չ միայն առանձին կապիտալիստների, այլև
արդյունաբերության ամրող ճյուղերի և նույնիսկ ամբողջ յեր-
կըրների գոյությունը։ Պարտիածներն անխնա կերպով հեռացվում
են։ Այդ՝ գարվինյան կոիմն և անհատական գոյության համար,
զոր աստիճանի յերարքացված և բնության թափալորությունից
ֆարդկային հասարակության մեջ և տեղափոխված։ Կենդանիների
բնական վիճակը մարդկային զարգացման պատճն և ներկայանում։
Հանրային արտադրության և կապիտալիստական յուրացման հա-
կասությունը յերեան և զալիս վորպես հակադրություն առանձիւ
գործարաններում արտադրության կազմակերպման և ամրող հա-
սարակության արտադրության անարխիայի միջև։

Կապիտալիստական արտադրության ծագման հետևանքով նրան հատուկ հակասության այդ յերկու ձևերի մեջ անելանելի կերպով չարժվում է նա, զծելով այն «կափարդական շրջանը», վորը նրա մեջ (կապիտալիստական արտադրության մեջ) հայտնաբերել եր գեռ ֆուրյեն։ Բայց ֆուրյեյի ժամանակներում գեռ անկարելի յեր տեսնել, վոր այդ շրջանն աստիճանաբար նեղանում է, վոր արտադրության շարժումը պարուրածէ և ընթանում է, մոլորակների շարժման նման, պետք է ավարտվի կենտրոնի հետ բաղկավորված։ Արտադրության հանրային անարխիայի անողոքությունը մարգկության շարունակ աճող մեծամասնությանը դարձնում է պրոլետարներ, իսկ պրոլետարիատը, իր հերթին, վերջ կդնի արտադրության անարխիային։ Արտադրության սոցիալական անարխիայի նույն անողոք ուժը խոչը արդյունաբերությանը ծառայող մեքենաների անվերջ կատարելագործման հնարակությունը դարձնում է յուրաքանչյուր առանձին կապիտալիստի համար իր մեքենաներն անընդհատ կատարելագործելու բացարձակ պարտականություն՝ քայլայման սպառնալիքի տակ։ Բայց մեքե-

¹ XVII և XVIII դարերի առևտրական պատերազմները մղլում էին՝ Պորտուգալիայի, Իսպանիայի, Հունաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի միջև ՀՅՈՒ-կաստանի ու Ամերիկայի հետ կատարվող առևտրին տիրանալու և այդ յերկրները զարութների վերածելու համար։ Այդ պատերազմներից հաղթող դուրս յեկավ Անգլիան, վարի ձեռքն ընկալ XVIII դարի վերջին համաշխարհային ամրոցը առևտրը ԽՄք։

Նաները կատարելագործել՝ նշանակում ե մարդկային աշխատանքն ավելորդ դարձնել։ Յեթև մեքենաներ մտցնելն ու կատարելագործելը նշանակում եր միլիոնավոր ձեռնաշխատ բանվորների արտամղումը մեքենաների վրա աշխատող փոքրաթիվ բանվորների կողմից, ապա մեքենաների կատարելագործումը նշանակում է հենց իրենց՝ մեքենաների վրա աշխատող բանվորների հետզհետե ավելի սաստիկ արտամղումը և բանվորական ձեռքերի ուժեղ առաջարկի այնպիսի գոյացում, վորը զերազանցում ե նրանց միջին պահանջարկից կապիտալի կողմից։ Զգրադված բանվորների մասսան կաղմում և արդյունաբերական պահեստի բանակը, ինչպես դեռ 1845 թվին եմ յես նրան անվանել, վոր պատրաստ ե արտադրությանը ծառայելու, յերբ վերջինն ամբողջ թափով ե աշխատում, և փողոց ե շղթավում յուրաքանչյուր աշխուժացման անխուսափելիորեն հետեւող կրախի ժամանակ։ Այդ բանակը, վոր շարունակ կապարե ծանրոցի պես կախված ե բանվոր դասակարգի վոտքերից նրա և կապիտալի միջն մղվող գոյության կովում, բանվորական աշխատավարձի կարգավորիչ ե ծառայում, շարունակ պահելով այդ աշխատավարձը ցած մակարդակի վրա, կապիտալիստների պահանջներին համապատասխանորեն։ Այդպիսով, դուրս ե գալիս, վոր մեքենան, Մարքսի բառերով ասած, կապիտալի ամենառաժեղ զենքն ե բանվոր դասակարգի դեմ, վոր աշխատանքի դործիքը շարունակ խլում ե հացը աշխատավորի ձեռքից, և բանվորների սեփական պլոդուկտը դառնում ե մի միջոց նրանց ստրկացնելու համար։ Դուրս ե գալիս, վոր արտադրության ծախքերի խնայողությունը միևնույն ժամանակ աշխատանքային ուժի ամենաանպատկառ վատնումն ե և մի հափշտակություն աշխատանքի նորմալ պայմանների նկատմամբ։ Վոր մեքենան, աշխատանքային ժամանակը կրճատելու այդ հղորադույն միջոցը, ամենաճիշտ միջոցն ե դառնում բանվորի և նրա ընտանիքի ամբողջ կյանքը կապիտալին ծառայելու միջտ պատրաստ աշխատանքային ժամանակի վերածելու համար։ Պարզվում ե, վոր բանվոր դասակարգի մի մասի ուժերից վեր աշխատանքը պայմանավորում ե նրա մյուս մասի կատարյալ գործադրկությունը, վոր ամբողջ աշխարհում սպառողների հետեւից ընկած խոշոր արդյունաբերությունը՝ իր տանը բանվորական մասսաների սպառումը չնշին մինիմումի յե հասցնում և այդպիսով քայլքայում ե

¹ «Բանվոր գասակարգի դրույթը յուշն Անդրկայում» դրքի մէջ:—կարև Մարքս
4 Ֆ. Անգելս, Յէրկ., 4. IV, էջ 293—573: Խմբ.:

իր սեփական շուկան : «Այն որենքը, վորի համաձայն հարաբերական գերբնակչությունը կամ արդյունաբերական պահեստի բանակը շարունակ հավասարակշության մեջ է գտնվում կապիտալի կուտակման չափի և ուժի հետ ,—այդ որենքը բանվորին ավելի ամուր է գամում կապիտալին, քան Հեփեստոսի մուրճը Պրոմեթեսուին գամեց ժայռին : Այդ որենքը պայմանավորում է աղքատության կուտակումը կապիտալի կուտակմանը համապատասխան չափով : Հետեւապես, հարստության կուտակումը մեկ բեկում նշանակում է աղքատության, հյուծման, ստրկության՝ տղիտության, բրտացման ու բարոյական այլասերման կուտակում հակառակ բեկում, այսինքն՝ այն դասակարգի շարքերում, վորի աշխատանքի արյունիքը դառնում է կապիտալ» (Մարքս, «Կապիտալ») : Արտադրության կապիտալիստական յեղանակից պրոդուկտների այլ բաշխում պահանջնելը նույնպիսի իմաստ կունենար, ինչպես յեթե պահանջնելինք, վոր մարտկոցի ելեկտրոդները, մնալով նրա հետ միացած, գաղաքեյին ջուրը տարրալուծելուց և դրական բեկում թթվածին, իսկ բացասականում ջրածին հավաքելուց :

Մենք տեսանք, թե ինչպես կատարելազործման ընդունակությունը, վոր արդի մեքենաների կողմից ամենաբարձր աստիճանին է հասցված, չորհիվ հանրային արտադրության անարխիայի, գարձել է մի անողոք որենք, վոր առանձին արդյունաբերական կապիտալիստներին հարկադրում է շարունակ բարելավելու իրենց մեջնաները և ավելացնելու նրանց արտադրողական ուժը : Նույնպիսի հարկադիր որենքի յե վերածվում նրանց համար նաև իրենց արտադրության չափերն ընդարձակելու հասարակ փաստական հարավորությունը : Խոչոր արդյունաբերության ընդարձակման լիթուարի ընդունակությունը, վորի հանդեպ գաղերի ընդարձակելու մի յերեխայական խաղալիք է, այժմ հրապարակ է գալիս վորպես այդ արդյունաբերությունը թե՛ քանակապես և թե՛ վորակապես ընդարձակելու պահանջ . այդ պահանջը հալթահարում է ամեն մի հակաղղեցություն : Այդ հակաղղեցությունը ստեղծվում է խոչոր արդյունաբերության պրոդուկտների սպառությունով, վաճառահանումով, չուկաներով : Իսկ շուկաների թե՛

¹ Պրոմեթեոսը հին-հունական դրույցի (առասպելի) հերոսն եր, վոր յեղկնքից կրակը հափշտակեց մարդկանց համար : Առասպելի համաձայն՝ դայրացած աստվածների հրամանով կրակի ասոված չեփեստոսը Պրոմեթեոսին դամեց ժայռին : Խմբ :

եքստենսիվ և թե՛ ինտենսիվ ընդարձակման ընդունակությունը վորոշվում է բոլորովին ուրիշ՝ անհամեմատ ավելի պակաս ուժով գործող որենքներով : Ծուկաների ընդարձակումը չի կարող արտադրության ընդարձակման հետ միևնույն մակարդակով ընթանալ : Բաղիսումը անխուսափելի յե գառնում, և վորովհետեւ նա ի վիճակի չե կոնֆլիկտը լուծելու այնքան ժամանակ, մինչև վորնա չպայմանական արտադրության հենց կապիտալիստական յեղանակը, առաջնում է պարբերական : Կապիտալիստական արտադրությունը մի նոր «կախարդական շրջան» և ստեղծում :

Յեկ իրոք, սկսած 1825 թվից, յերբ բռնկվեց առաջին ընդհանուր ճգնաժամը, ամբողջ արդյունաբերական ու առևտրական աշխարհը, բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների և նրանց ավելի կամ պակաս բարբարոսական կցուկների արտադրությունն ու փոխանակությունը մոտավորագիս տաս տարին մի անգամ ուելսերից դուրս են գալիս : Առևտուրը կանդ և առնում, չուկաները մեր լցում են սպառում չգունվող մեծ քանակությամբ պրոդուկտներով, կանխիկ վողն անհետանում և շրջանառությունից, վարկը վոչնչանում է, զործարանները կանդ են առնում, բանվորները զրկվում են ապրուստի վորեև միջոցից հենց այն պատճառով, վոր նրանք այդ միջոցներից չափազանց մեծ քանակությամբ են արտադրել սնանկությունը սնանկության հետեւ և գալիս, աճուրդին աճուրդն և փոխարինում : Լճացումն ամբողջ տարիներ և տեսում, արտադրողական ուժերի և պրոդուկտների մասսաները վոչնչացվում են ու վատնվում, մինչև վոր կուտակված ապրանքները ծախվում են, վերջապես, ավելի կամ պակաս իջնցրած դներով և ստիճանաբար վերականգնվում և արտադրության ու փոխանակության շարժումը : Կամաց-կամաց այդ շարժումն արտադրանում է, քայլը փոխարինվում և վարդով (րիս), արդյունաբերական վարդը փոխվում և արշավի, վորն իր տեղը զիջում և խոլական սրարչավի, արդյունաբերության, առևտրի, վարկի ու սպեկուլացիայի մի խոկական խոչընդունելով ծիարչավի, վորպետի հուսահատական թոփչքներից հետո կրկին կրախի անդունքը նետվին : Յեկ այդպես շարունակ նորից ու նորից : 1825 թ. սկսած մենք արդեն հինգ անգամ ապրել ենք այդ շրջապտույտը և այժմ (1877 թ.) վեցերորդ անգամն ենք ապրում այն : Այդ ճգնաժամերի բնույթն այն աստիճան ցայտունորեն և արտահայտված, վոր ժուրյեն իսկույն համար աստվածների հրամանով կրակի ասոված չեփեստոսը Պրոմեթեոսին դամեց ժայռին : Խմբ :

Ճղնաժամերի միջոցին հանրային արտադրության և կապիտալիստական յուրացման փոխադարձ հակասությունը հասնում է հուժկու պոռթկումի: Ապրանքների շրջապատճեռը մի առ ժամանակ դադարում է. փողը շրջանառության գործիքից գանձնում է նրա խոչընդոտը, ապրանքների արտադրության ու շրջանառության բոլոր որենքները թարս են գործում: Տնտեսական հակասությունները հասնում են իրենց ամենաբարձր կետին, —արտադրության յեղանակը ծառանում է փոխանակության յեղանակի դեմ:

Այն անկասկածելի փաստը, վորաբաղրության հանրային կաղմակերպումը դորձարանի ներսում հասնում է զարգացման այնպիսի աստիճանի, յերբ նա անհամառեղիքի յև դառնում նրա կողքին և նրա վրա գոյություն ունեցող՝ արտադրության անսարիխացի հետ հասարակության մեջ, —այդ փաստը շոշափելի յեղանակում հենց իրենց կապիտալիստների համար չնորհիվ ճզնաժամերի միջոցին կացարվող կապիտալների բռնի համակենտրոնացման, վորաբեղի յեղանակում բազմաթիվ խոշոր և եղանակակի մեծ թվով ժանր կապիտալիստների քայլքայման միջոցով։ Կապիտալիստական արտադրության ամբողջ մեխանիզմը կոտրվում է հենց իր խոր ստեղծած արտադրողական ուժերի ծանրության տակ։ Նա այլևս չի կարող կապիտալի վերածել արտադրության միջոցների ամբողջ մասսան, նրանք մնում են առանց գործադրության, ուստի անդորրության և հարկադրված նաև բանվորների պահեստի բանակը։ Արտադրության միջոցները, կենսամթերքները, բանվորական ձեռքերը, արտադրության ու ընդհանուր բարորության բարոր տարրերը պահանջից ավելի յեն։ Բայց, ինչպես ֆուրյեն և առում, այդ «առատությունը դառնում է կարիքի ու զրկանքների աղբյուր», վորովհետեւ հենց նա ել խոչընդուռ և հանդիսանում արտադրության ու սպառման միջոցների կապիտալ դառնալուն, վորովհետեւ կապիտալիստական հասարակության մեջ արտադրության միջոցները չեն կարող գործել այլ կերպ, քան կապիտալի, այսինքն՝ մարդկային աշխատանքային ուժի չահազործման գործիքի փոխարկվելով։ Ինչպես մի ուրվական կանոնած և բանվորների և արտադրության ու սպառման միջոցների միջև արտադրության ու սպառման այդ միջոցների կապիտալ գառնալու անհրաժեշտությունը։ Միայն նա յեղանակակի միջունակում արտադրության իրային ու անձնական լծակների միացմանը, միայն նա յեղանակառում արտադրության միջոցներին գործելու, իսկ բանվորներին՝ ապրելու և աշխատելու։ Հետեւապես, մի կողմից արտադրության կապիտալիս-

տական յեղանակն ինքն է յերեան բերում արտադրողական ուժեցից հետագա զեկավարման իր անընդունակությունը։ Մյուս կողմից, իրենք, արտադրողական ուժերն աճող թափով ձգտում են վոչնչացնելու այդ հակասությունը, իրենց ազատելու կապիտալի իրենց հատկությունից, փաստըն ընդունելու իրենց բնույթը—հանրային արտադրողական ուժերի բնույթը։

Ուժեղ թափով աճող արտադրողական ուժերի այդ գիմագլու-
թյունը կապիտալի իրենց հատկության դեմ, նրանց հանրային
բնույթն ընդունելու այդ աճող անհրաժեշտությունը ստիպում է
հենց իրենց՝ կապիտալիստների դասակարգին հետզհետե ավելի ու
ավելի հաճախ դրանք հանրային արտադրողական ուժեր համարե-
լու, վորքան այդ առհասարակ հնարավոր և կապիտալիստական
հարաբերություններում։ Ինչպես արդյունաբերական յեռուղեռի
շրջաններն իրենց ուռցրած վարկերով, այնպես էլ հենց կապիտալիս-
տական խոշոր ձեռնարկությունները քայլայող կրախները հասց-
նում են արտադրության միջոցների մեծ մասաների հանրայնաց-
ման այնպիսի ձեփ, վորյն մենք հանդիպում ենք զանազան տե-
սակի բաժնետիրական ընկերություններում։ Արտադրության ու
փոխանակության այդ միջոցներից մի քանիսը, ինչպես որինակ,
յերկաթուղիները, հենց իրենց եյությամբ այնքան հսկայական
են, վոր նրանք բացառում են կապիտալիստական շահագործման
առեն մի այլ ձև։ Զարգացման վրոշ աստիճանում անբավարար և
գառնում նաև այդ ձեզ. տվյալ յերկրի արդյունաբերության մի-
ևնույն ճյուղի բոլոր խոշոր արտադրողները միանում և կազմում
են մի «արեսո», միություն, արտադրությունը կարգավորելու
նպատակով։ Նրանք վորոշում են այն բանի ամբողջ գումարը,
ինչ-վոր պետք ե արտադրովի, բաշխում են այդ գումարն իրար
մեջ և նախորոք թելադրում են սահմանված վաճառքի գինը։
Բայց վորովհետեւ այդ տրեստները՝ տուերի մեջ առաջին խոչըն-
դոտի գեպքում մեծ մասամբ քայլայլում են, ուստի նրանք հենց
դրանով ել արտադրության ե'լ ավելի մեծ համակենտրոնացում
են առաջացնում։ Արդյունաբերության մի ամբողջ ճյուղ վերած-
վում է մի ընդհանուր հսկայական բաժնետիրական ընկերության,
ներքին մրցությունը տեղի յե տալիս այդ ընկերության ներքին
ժենաշնորհին։ Այդպես պատահեց այդ բանը 1890 թ. կալաքարի
անդլիական արտադրության հետ, վորը բոլոր 48 խոշոր Փիրմա-
ների միաձուլվելուց հետո անցավ մեկ միասնական կենտրոնի մի-
ջոցով զեկագարվող, 120 միլիոն մարկ գրամագլուխ։ ունեցող
միակ ընկերության ձեռքը։

Տրեստներում մըցությունը դառնում է մենաշնորհ^Հ, իսկ կտ-
պիտալիստական հասարակության անպլան արտադրությունը
կապիտուլացիայի յեւ յենթարկում վերահաս սոցիալիստական
հասարակության պլանային արտադրության առաջ: Ճիշտ և,
տկզբում միայն հողուտ և իշահ կապիտալիստների: Բայց իր այդ
ձեռվ շահագործումը դառնում է այնքան չոշափելի, վոր պետք է
խորտակվի: Վոչ մի ժողովուրդ չեր համաձայնվի յերկար ժամա-
նակ հաշտվել տրեստների զեկավարած արտադրության հետ, ամ-
բողջ հասարակության նրանց ձեռքով կատարվող անսքով՝ շա-
հագործման հետ՝ կուղոններ կտրելով ապրող մի փոքրաթիւ
ավաղականմբի կողմից:

Այսպես թե այնպես, տրեստների հետ թե առանց տրեստների, պետությունը, վորպես կապիտալիստական հասարակության պաշտոնական ներկայացուցիչը, հարկադրված է իր վրա վերցնելու արտադրության ղեկավարությունը: Պետական սեփականու-

1 «իմասերի աւլիզմը, —առումը և կենինը, —աճել ե վորպես ընդհանրագետ կապիտալիզմի հիմնական հատկությունների զարգացում և անմիջական շարունակություն։ Բայց կապիտալիզմը զարձակ կապիտալիստական խմբերի լիզմի միայն իր զարգացման վրոշ, շատ բարձր աստիճանում, յերբ կապիտալիզմի մի քանի հիմնական հատկություններն սկսեցին վերածվել իրենց հակադրությանը, յերբ ամբողջ գծով կազմակերպվեցին ու յերեան յեկան կապիտալիզմից դեպի ավելի բարձր հասրարկական-անտեսական կառուցքի անցման դարաշընի գծերը։ Այդ արցոցեսում տնտեսագետ հիմնականը կապիտալիստական ազատ մրցության փոխարինումն է կապիտալիստական մենաշնորհներով։ Ազատ մրցությունն ընդհանրացես կազմիտալիզմի և ազգանքային արտադրության հիմնական հատկությունն է. մենաշնորհը ազատ մրցության ուղղակի հակադրությունն է, բայց այդ վերջնը մեր աչքի առաջ սկսեց գտնոնալ մենաշնորհ, ստեղծելով խոչըր արտադրություն, գուրս մղելով մանր արտադրությունը, փոխարինելով խոչըր խոչըրագույնով, արտադրության և կապիտալի համակենտրոնացումն այնտեղ հասցնելով, վոր նրանից աճում եր ու աճում և մենաշնորհը—կարտեները, սինդիկատները, տրեսոնները, նրանց հետ ձուլվող՝ միլիարդների հետ գործ ունեցող ինչ-վոր յերկու տասնյակ բանկերի կապիտալը։ Ենք միենույն ժամանակ մենաշնորհները, աճելով ազատ մրցությունից, չեն վերացնում այն, այլ գոյություն ունեն նրա վրա և նրա կողքին, զրանով մի շարք առանձնաւոր սուր ու խիստ հակասություններ, բայց խումներ, կոնֆլիկտաներ ծնելով» (Լենին, Յերի., Հ. XIX, Կ 141—142)։ Խմբ.։

2 Յես ասում եմ «հարկադրված ե», վրոպէհետև միայն այն դեպքում, յեթե արագըության կամ հաղորդակցության միջոցներն իսկապես աճեն-անցնեն բաժնետիրական ընկերությունների կառավարչությունից, յերբ նրանց անցումը պետք է իրավասության տակ դառնան տնօնքավես անխուսափելի, միայն այդ ժամանակ, —յեթե այդ անցումը նույնիսկ արդի պետությունը կատարի, —այդ անցումը կլինի մի տնտեսական պրոզես, մի քայլ առաջ

թյուն դարձնելու այլ անհրաժեշտությունը դալիս և ամենից առաջ հաղորդակցության խոշոր միջոցների—պոստի, հեռագրի և լրիկաթուղիների համար :

ՅԵՒԹԵ ճպնաժամերը ցույց տվին, վոր բուրժուազիան անընդգունակ և ժամանակակից արտադրողական ուժերի հետագա կառավարմանը, ապա արտադրողական խոշոր ձեռնարկությունների ու հաղորդակցության միջոցների անցումը բաժնետիրական ընկերությունների, տրեստների և պետության ձեռքը ալղացուցում, երբուրժուազիայի ավելորդ լինելն այդ նպատակի համար։ Վարձուայողներն այժմ կատարում են կապիտալիստների բոլոր հասարակական Փունկցիաները։ Իրենց՝ կապիտալիստների համար ուրիշ հասարակական գործունեյություն չի մնացել, բացի յեկամուտներ զիիկելուց, կուպոններ խուզելուց և բորսայում խաղալուց, վորտեղ զանազան կապիտալիստներ մեկը մյուսի ձեռքից կապիտալներ են խլում։ Արտադրության կապիտալիստական յեղանակը, վոր սկզբում բանվորներին դուրս մղեց, այժմ նաև իրենց՝ կապիտալիստներին և դուրս մղում, ճիշտ և, առայժմ դեռ

առագբողական բոլոր ուժեմքը հենց իր՝ հասարակության ձեռքն անցնելու հասալողաբարձին; Բայց վերը ին ժամանակները, յերբ ի խմարկն ակսեց մասնադիտանալ պետական մենաչնորդները ստեղծելու մեջ, յերեան յեկալ մի առանձին տեսակի կեղծ սոցիալիզմ, վոր մերթ այսուել, մերթ այնտեղ արտահայտվում է մի առանձին տեսակի կամավոր լակերտիյան ձեռով, վորն առանց փորեւ զժվարության սոցիալիզմ և հայտարարում արտաքրության միջնորդի ամեն մի, նույնիսկ բիսմարկյան, փոխակերպում պետական սեփականության: Յեթե ծխախոսի մենաչնորդը սոցիալիզմ և, ասլա Նապոլեոնն ու Մետիքլին անշուշտ և սոցիալիզմի հիմնադիրների շարքը դասվելին: Յերբ բերդիական կառավարությունը ամենաառորյա քաղաքական ու Փինանսական նկատառումներով ինքը ձեռնարկեց գլխավոր յերկաթուղիների կառուցման, յերբ Բիսմարկին առանց ամենափոքր տնտեսական անհրաժեշտության պետական սեփականություն դարձեց պրուսական ամենազլավոր յերկաթուղարծերը՝ շահագործման հարմարության և պատերազմի դեպքում նրանցից սովորելու նպակալով, յերկաթուղային ծառայողներից կառավարության ողտին հնազանդութեն քվեարկող հոտ ստեղծելու համար, իսկ գլխավորակեա, մի նոր, պառլամենտից անկախ յեկամտի աղյուսը ունենալու համար,—ապա այդ բոլորը վոչ մի դեպքում սոցիալիզմ չն՝ վո՛չ ուղղակի, վո՛չ եւ անուղղակի, վո՛չ գետական, վո՛չ անփիտակական սոցիալիզմ: Այլապես պլոտուսական պետական բանկը, արքայական հախճապակու մանուքակոտուրան և մինչև անդամ վաշտային գերձականուցները բանակում պետք և սոցիալիստական հիմնարկներ ճանաչվելին, կամ նույնիսկ՝ Ֆրիդրիխ-Կելչել Ան-ի ժամանակ յերեանական թվականներին... պոռնկանաների՝ մի ինչ-որ ինքոքի կողմից լուրջ կերպով սությարկիած պետականացո՞ւմը: (Անգելսի ծանոքագրությունը):

վոչ դեպի արդյունաբերության պահեստի բանակը, այլ միայն ավելորդ բնակչության կարգը:

Բայց վո՛չ բաժնետիրական ընկերությունների ու տրեստների ձեռքն անցնելը, վո՛չ պետական սեփականություն դարձնելը, սակայն, արտադրողական ուժերից չեն խում կապիտալի նրանց հատկությունը: Բաժնետիրական ընկերությունների ու տրեստների վերաբերմբ այդ ակներեւ է: Իսկ ինչ վերաբերում ե արդի պետությանը, ապա նա ուրիշ բան չե, բայց յեթե մի կազմակերպություն, վոր բուրժուական հասարակությունն ստեղծում ե իր համար կապիտալիստական արտադրության ընդհանուր, արտաքին պայմանները ինչպես բանվորների, այնպես ել առանձին կապիտալիստների վոտնձգություններից պաշտպանելու նպատակով: Ինչպիսի ձևեր ել ընդունի արդի պետությունը, նա մնում է վորպես մի զուտ կապիտալիստական մեխանիզմ, կապիտալիստների պետություն, մի իդեալական ամբողջացված կապիտալիստ: Վորքան շատ արտադրողական ուժեր զավթի ու իր սեփականությունը դարձնի նա, այնքան ավելի լրիվ կլինի նրա ամբողջացված կապիտալիստ դառնալը և այնքան ավելի մեծ թվով քաղաքացիների նա կշահաղործի: Բանվորները կմնան վորպես վարձու բանվորներ, պրոլետարներ: Կապիտալիստական հարաբերությունները չեն վերանում, այլ, ընդհակապուակը, ծայրահեղության, ամենաբարձր կետին են հասցվում: Բայց բարձրագույն կետում հեղաշրջում ե կատարվում: Արտադրողական ուժերի պետական սեփականությունը չի լուծում կապիտալիզմի հակասությունները, բայց նա իր մեջ բովանդակում ե նրանց լուծման ֆորմալ միջոցը, լծակը:

Այդ լուծումը կարող է լինել արդի արտադրողական ուժերի հանրային բնույթի փաստական ընդունումը, հետեւապես արտադրության, յուրացման և փոխանակման յեղանակների համապատասխանեցումը արտադրության միջոցների հանրային բնույթին: Իսկ դրան հասնել կարելի յե միայն նրանով, վոր հասարակությունը զրավի անմիջապես ու բացահայտորեն արտադրողական ուժերը, վորոնք աճելանցել են իրենց ոգտագործման ամեն մի այլ յեղանակից: Արտադրության և նրա պրոդուկտների հանրային բնույթը, վորն այժմ արտահայտվում ե ընության կույր որենքի քայքայիչ ուժով, հարվածում ե հենց իրենց՝ արտադրողներին, պարբերաբար խախտում ե արտադրության ու փոխանակության ընթացքը, —այն ժամանակ արտադրողների ձեռքով գիտակցաբար կկենսագործվի և անկարգության ու պար-

բնրական կատաստրոֆների պատճառից կդառնա արտադրության հզորագույն լծակը:

Հասարակական ուժերը, բնույթյան ուժերի նման, կուրորեն, բոնի ու քայքայիչ կերպով են գործում, քանի դեռ մենք չենք հասկանում և հաշվի չենք առնում դրանք: Բայց հենց վոր մենք հանաչեցինք այդ ուժերը, ուսումնասիրեցինք նրանց գործողությունը, ուղղությունն ու ազդեցությունը, այն ժամանակ միայն մեղնից ե կախված նրանց ավելի ու ավելի շատ յենթարկելը մեր կամքին և նրանց ոգնությամբ մեր նպատակներին հասնելը: Այս առանձնապես վերաբերում է արդի հզոր արտադրողական ուժերին: Քանի զեռ մենք համառորեն հրաժարվում ենք նրանց ելությունն ու բնույթը հասկանալուց, —իսկ այդ հասկանալուն դիմագրում են արտադրության կապիտալիստական յեղանակն ու սրա պաշտպանները, —այնքան ժամանակ արտադրողական ուժերը մեղնից անկախ և մեր գեմ են գործում, ինչպես այդ մանրամասնորեն ցույց ե տրված վերևում: Բայց հենց վոր հասկացված է նրանց բնույթը, նրանք միավորված արտադրողների ձեռքում կարող են դիվային իշխողներից հլու ծառաներ դառնալ: Այստեղ նույն տարբերությունը կա, ինչ-վոր կա փոթորկաբեր ամպից առաջացող կայծակի կործանարար ուժի և հեռագրական աղարատի կամ աղեղնավոր լապտերի մեջ հնազանդորեն դործող ելիկարականության միջև, հրդեհի և մարդու ձեռքով զեկավարվող կրակի միջել: Յերբ արդի արտադրողական ուժերի հետ կոկոն վարվել նրանց վերջապես ճանաչված բնույթի համեմատ, արտադրության մեջ իշխող հանրային անարխիան կիսումարինի հանրային արտադրությամբ, վորը կազմակերպված կլինի պլանով և այն հաշվով, վոր բավարարի ինչպես ամբողջ հասարակության, այնպես ել նրա յուրաքանչյուր անդամի կարիքները: Այն ժամանակ յուրացման կապիտալիստական յեղանակը, վորի ժամանակ պրոդուկտն սուրբ-կացնում է նախ արտադրողին, իսկ հետո նաև յուրացնողին, իր տեղը կղիջի յուրացման նոր յեղանակին, վորը հիմնված կլինի արտադրության արդի միջոցների բուն իսկ բնույթի վրա, այն ե՝ իր տեղը կղիջի մի կողմից, պրոդուկտների, վորպես արտադրությունը պահպանելու և ընդարձակելու միջոցների, հանրային անմիջական յուրացմանը, իսկ մյուս կողմից, նրանց՝ վորպես դուրս առ առ ու սպառման միջոցների անհատական անմիջական յուրացմանը:

Բնակչության ավելի ու ավելի հսկայական մեծամասնությա-

Նը պրոլետարներ դարձնելով, արտադրության կազիտալիստական յեղանակը ստեղծում է մի ուժ, վորն իր սեփական կործանման սպառնալիքի տակ պետք է կատարի այդ հեղաշրջումը։ Ստիպելով արտադրության խոչը հանրայնացված միջոցներն ավելի ու ավելի դարձնել պետական սեփականություն, կազիտալիզմն ինքն և ժամանակում այդ հեղաշրջումը կատարելու ճանապարհը։ Որովհետարիատը գրավում ե պետական իշխանությունը և արտադրության միջոցները դարձնում ե ամենից առաջ պետական սեփականություն։ Բայց հենց գրանով ել նա վոչնչացնում է իրեն, վորպես պրոլետարիատ, հենց գրանով ել նա վոչնչացնում է բոլոր գասակարգային տարբերություններն ու դասակարգային հակադրությունները, իսկ դրա հետ միասին նաև պետությունը։ Մինչեւ այդ գոյություն ունեցած և գոյություն ունեցող հասարակության համար, վոր շարժվում ե դասակարգային հակադրությունների մեջ, անհրաժեշտ եր պետությունը, այսինքն՝ շահագործող դասակարգի կազմակերպությունը արտադրության նրա արտաքին պայմանները պաշտպանելու համար, նշանակում ե, հատկապես շահագործվող դասակարգին բռնի կերպով՝ արտադրության ավյալ յեղանակով վորոշվող պայմանների մեջ պահելու համար (ստրկություն, ճորտություն, վարձու աշխատանք)։ Պետությունն ամբողջ հասարակության պաշտպանական ներկայացնելու յեղել, նրա կենտրոնացումը մի յերեսութական կորպորացիայի մեջ, բայց նա այդպես է յեղել լոկ այնքան, վորքան նա այն դասակարգի պետությունն է յեղել, վորն իր դարաշրջանի համար մենակ ինքն և ներկայացրել ամբողջ հասարակությունը։ Հին ժամանակներում նա յեղել է սորկատերերի—պետության քաղաքացիների, միջին դարերում—ֆեոդալ պղնիականության, մերժամանակ—բոլժուազիայի պետությունը։ Յերբ պետությունը, վերջապես, դառնում է խսկապես ամբողջ հասարակության ներկայացուցիչը, այն ժամանակ նա ինքն իրեն ավելորդ է դարձնում։ Այն ժամանակից սկսած, յերբ չի լինի վոչ մի հասարակական դասակարգ, վորին պետք լիներ ճնշման մեջ պահելու, այն ժամանակ սկսած, յերբ գաղաքական այլապահ սկսած, այդպիսի անցումը հանրակությունը տառապարի գոյությունը հակասում է արտադրության, հաղթարարության իդեալին և այլն, վո՛չ թե դասակարգերը վոչնչացնելու պարզ ցանկության հետևանքով, այլ միայն վորոշ նոր տնտեսական պայմանների առկայությամբ։ Հասարակության բաժանումը շահագործող և չա-

լինի։ Առաջին ակտը, վորի մեջ պետությունը հանդես է գալիս իրեկ խսկապես ամբողջ հասարակության ներկայացուցիչ, —արտադրության միջոցները հասարակության անունից իր տիրապետության տակ առնելը, —միաժամանակ նրա՝ վորպես պետության վերջին ինքնուրույն ակտն ե։ Պետական իշխանության միջամտությունը հասարակական հարաբերություններին այն ժամանակ ավելորդ է գառնում մեկ բնադավառի հետեւից մյուսում, և ինքն իրեն խամրում է։ Անձերի վրա յեղած կառավարության տեղը բռնում է իրերի անորինումը և արտադրության պրոցեսների դեկազարումը։ Պետությունը «չի վերացվում», նա մահանում ե։ Սրա հիման վրա պետք է «ազատ ժողովրդական պետություն» Փրազը գնահատել վորպես ժամանակավորապես՝ գոյության աղիտատորական իրավունք ունեցող, բայց վերջին հաշվով դիտականորեն մահանել Փրազ¹։ Սրա հիման վրա պետք է գնահատել նմանապես այսպես կոչված անարխիստների այն պահանջը, թե պետությունը պետք է մեկ որվա մեջ վերացվի²։

Սյն ժամանակից սկսած, յերբ պատմության ասպարեզում հանդես է յեկել կապիտալիստական արտադրությունը, արտադրության բռնուր միջոցների անցումն ամբողջ հասարակության տիրապետության տակ վորպես սեփականություն հաճախ է ապագայի ավելի կամ ողակաս մշուշապատ իդեալի ձեռվ յերեացել ինչպես առանձին անհատների, այնպես ել ամբողջ աղանդների։ Բայց հնարավոր և պատմականորեն անհրաժեշտ դարձավ նա միայն այն ժամանակ, յերբ նյութական պայմաններ յերեան յեկան նրա իրականացման համար։ Ինչպես և ամեն մի այլ հասարակական պրոցերս, այդպիսի անցումը հանրակուր և դառնումը վո՛չ թե այն պատճառով, վոր դիտակցված ե, վոր դասակարգերի գոյությունը հակասում է արտադրության, հաղթարարության իդեալին և այլն, վո՛չ թե դասակարգերը վոչնչացնելու պարզ ցանկության հետևանքով, այլ միայն վորոշ նոր տնտեսական պայմանների առկայությամբ։ Հասարակության բաժանումը շահագործող և չա-

¹ «Ազատ ժողովրդական պետության» մասին տե՛ս Մարքս, «Գոթայի ծրագրեկ քննադատությունը»։ Խմբ.։

² Անարխիստները (Պրուդոն, Բակունին և այլն) ժխտում են ամեն մի պետություն և պրոլետարիատի գիտատուրայի հակառակորդներ են։ Ամեն մի (այդ թվում նաև պրոլետարիան) պետություն անհաջող վաշնչացնելու նրանց պահանջը, արդի անարխիստների յելութեները ընդդեմ ԱՄՀՄ-ում հաստատված պրոլետարական դիկտատորայի՝ մերկացնելու և անարխիստական «Քեռքիայի» բանվոր դասակարգին խորապես թշնամական ելությունը։ Խմբ.։

Հագործվող, իշխող և ճնշված դասակարգերի, արտադրության առաջվա անբավարար զարդացման անխուսափելի հետևանքն եր : Քանի դեռ հանրային աշխատանքի արդյունքների միադրումարը հազիվ ե գերազանցում գոյության ամենաանհրաժեշտ միջոցներից, քանի դեռ աշխատանքը խլում է հասարակության հսկայական մեծամասնության ամբողջ կամ համարյա ամբողջ ժամանակը, այնքան ժամանակ հասարակությունը անխուսափելիորեն դասակարգերի յե բաժանվում : Բացառապես անազատ աշխատանքով զբաղված հսկայական մեծամասնության կողքին կազմվում է մի դասակարգ, վոր աղաստված և անմիջական արտադրողական աշխատանքից և վարում է հասարակական գործերը—աշխատանքի գեկավարումը, պետական կառավարչությունը, արդարադատությունը, գիտությունները, արվեստները և այլն : Հետևապես, դասակարգերի բաժանման հիմքը կազմում է աշխատանքի բաժանման որենքը : Այդ, սակայն, բնակի ել չի բացառել բնության, հափշտակության, խարերայության և խորամանկության կիրառումը դասակարգերի բաժանմելիս և չի խանդարել իշխանությունը զբաղված տիրող դասակարգին իր զիրքն ի հաշիվ աշխատավոր դասակարգերի ամրապնդելու և հասարակական դործերի կառավարչությունը մասսաների ուժեղ շահագործման վերածուու :

Բայց յեթե դասակարգերի բաժանվելը վորոշ պատմական արդարացում ել ունեցել է, ապա նա այդ արդարացումն ունեցել է միայն տվյալ շրջանի համար և տվյալ հասարակական պայմաններում։ Այդ բաժանումը պայմանավորված է յեղել արտագրության անբավարար չափով և խսդառ կվերացվի արդի արտագրողական ուժերի լրիվ զարգացումից հետո։ Յեվ, իրոք, հասարակական դասակարգերի վոչնչացումը յենթադրում է, վոր գալու յե պատմական դարդացման՝ այն աստիճանը, յերբ անախրոնիզմ է վո՛չ միայն այս կամ այն վորոշ դասակարգի տիրապետությունը, այլ նաև ընդհանրապես վորեե դասակարգային տիրապետությունը, հետևապես նաև ինքը՝ դասակարգերի բաժանումը։

¹ Մեր կուսակցության XVII կոնֆերենցիան և XVII համագումարը վորպես յերկրորդ հնդամյա պլանի խնդիր զրին վորչացնել պարագիտային տարբերի մնացորդները և առհասարակ դասակարգերը, կառուցել անդասակարդ սոցիալիստական հասարակություն։ «Յերկրորդ հնդամյակի հիմնական քայլաքական խնդիրն է կապիտալիստական տարբերի և առհասարակ դասակարգերի վերջնական լիվլիդացիան, դասակարգային տարբերությունը և շահագործումը ծնող պատճառների լիովին վորչացումը և կապիտալիզմի մնացուկների հար-

Հետեապես, դասակարգերի վոչնչացումը յենթադրում է արտա-
դրության զարգացման այնպիսի բարձր աստիճան, յերբ առան-
ձին հասարակական դասակարգի կողմից արտադրության մի-
ջոցների ու պրոդուկտների—խոհ նրանց հետ միասին նաև քաղա-
քական տիրապետության, կրթության ու հոգեսոր ղեկավարու-
թյան յուրացումը վո՛չ միայն դառնում է ավելորդ, այլ նաև ար-
դելք ե լինում անտեսական, քաղաքական ու մտավոր զարգացման
համար : Այդ աստիճանին այժմ հասել ենք : Բուրդուազիայի քա-
ղաքական ու մտավոր սնանկությունը հազիվ թե դադանիք ե
կազմում նույնիսկ հենց իր համար, իսկ նրա անտեսական սնան-
կությունը կրկնվում է ամեն տաս տարին մեկ անգամ կանոնավոր-
րապես : Ամեն մի ճշնաժամի ղեպքում հատարակությունը խեղդ-
վում է իր սեփական արտադրողական ուժերի և պրոդուկտների
ծանրության տակ, վորը նա չի կարող ոգտագործել, և անձարակ
և մնում այն անմիտ հակասության հանդեպ, վորը արտադրողնե-
րին զրկում է սպառելու հնարավորությունից հենց այն պատճ-

Թահարութը եկոնոմիկայի և մարդկանց գիտակցության մեջ, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությունը անդասակարգ սոցիալիստական համարակության դիտակից ու ակտիվ կառուցողներ դարձնելը» (XVII կուսկոնքի բրենցիայի քանաձնելը)։ Արդեն կուստիցության XVII համազումարում արած եր զեկուցման մեջ ընկեր Մոտավելը, ԽՍՀՄ ժողովրդատնտեսական վերելքի և ներքին գրության անալիզի հիման վրա արձանադրում եր, վոր «սոցիալիստական ձեն անրաժման տիրապետող և միակ իշխող ուժն ե ամբողջ ժողովրդական անտեսության մեջ»։ Այդ ավելց 1934 թ. Հունվարին։ Յերկու տարի անց, 1936 թ. Հունվարին, ԽՍՀՄ յերկրորդ գումարման ԿԳԿ յերկրորդ նստաշրջանում արած զեկուցման մեջ ընկեր Մոլոտովը կարող եր լիակատար իրավունքով արձանագրել, վոր «մենք հաջողությամբ իրազործում ենք յերկրորդ հնգամյակի հիմնական քաղաքական խնդիրը—կապիկտալիստական տարրերի և առհասարակ գաղափարների իիկիլիդացիան»։

Այդ չի նշանակում, թե մեղ մոռ վոչչացել են իրենց դասակարգային քնույթով մեղ թշնամի տարբերը: Դրանց թիվը դեռ քիչ չե: Յեկ հեղափոխական գլասասության ամենափոքր թուլացումը նրանք ողապարծում են, վորպեսողի ստորոտյան անեն և խանդարեն մեր գործին... Բայց յեթե վերցնենք մեր պիտության այժմյան սոցիալական հիմքը, ապա այդ լիովին համապատասխանում ե այն փաստին, զոր յերկրի ամբողջ ժողովրդական տնտեսությունը գարձել ե սոցիալիստական: Այս իմաստով դասակարգերի լիկվիդացիայի ինդիքը մենք լուծել լուք»:

Բոյ Հավաբդի հետ 1936թ. մարտի 1-ին ունեցած զրոյցի ժամանակ ընկեր Ստալինն ասում էր, վոր մենք «սպահալիստական հասարակություն ենք կառուցել»: Պատասխաններով նոր ընտրական սիստեմի և ԽՄՀՄ-ում մեկ կուսակցություն գոյություն ունենալու մասին Հավաբդի հարցին, ընկեր Ստալինն ասում էր. «Քանի վոր դասակարգելու չկան, քանի վոր դասակարգելու միջի

ուով, վոր պլազմուկտներն սպասողներ չունեն: Իրենց հզոր աճման մեջ արտադրության միջոցները սպասում են արտադրության կազմակերպության յեղանակի դրած կապանքները: Այդ կառավանքներից ազատվելը միակ նախնական պայմանն է արտադրողական ուժերի անընդհատ, շարունակ արագացող գարգացման համար, իսկ զրա շնորհիվ—նաև հենց իր՝ արտադրության գործնականապես անսահման ավելացման համար: Բայց այդ գեղ բոլորը չեն: Արտադրության միջոցները հանրային-սեփականություն գարձնելը վերացնում է վո՛չ միայն նրա կանոնավոր ընթացքի գեմ յեղած այժմյան արհեստական խոշընդուները, այլ նաև արտադրողական ուժերի ու պլրուկտների այժմ փաստորեն անխուսափելի վատնումն ու փշացումը, վորն ամենաբարձր չափերի յեն համում ճշնաժամերի միջոցին: Բացի դրանից, նաև հասարակության համար մեծ քանակությամբ արտադրության

սահմանները վերանում են, քանի վոր մնում է միայն մի վորոշ, բայց վաշ հրմանական տարրերություն, սոցիալիստական հասարակության տարրեր միջանակների միջև, չի կարող սնուցիչ հող լինել պայքարող կուսակցություններ սահղելու համար»:

Խորհուրդների Համամիութենական VIII Արտակարգ համագումարում արած Շնչ Միության Սահմանադրության նախադիմ մասին» իր դեկուցման մեջ ընկեր Ստալինն արձանագրում եր, վոր մեր խորհրդային սոցիալիստական հասարակության մեջ «բոլոր շահագործող դասակարգերը... վերացված են:

Մնացել ե բանվոր դասակարգը:

Մնացել ե գյուղացիների դասակարգը:

Մնացել ե բնակչությանը:

«Մեր խորհրդային հասարակությունը,—ասում եր ընկեր Ստալինը նույն զեկուցման մեջ,—հասավ այս բանին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիզմը, ստեղծեց սոցիալիստական հասարակակարգ, այսինքն՝ իրագործեց այն, վոր մարքսիստների մոտ կոչվում և կոմունիզմի առաջին կամ ստորին փուլ: Նշանակում ե, մեղանում արդեն հիմնականում իրականացված ե կոմունիզմի առաջին փուլը, սոցիալիզմը»:

Համաշխարհային-սպասմական այդ հաղթանակները, վորոնք ձեռք են բերված ԽՍՀՄ-ում գասակարգային թշնամու զեմ մզգած ամենազաման պայքարում, և հետագա ասածընթաց շարժումը զեպի կոմունիզմի բարձրակույթ փուլը պահանջում են պլուտօնարիատի դիկաստուրայի ամեն կերպ ամրապնդում: «ՄԵնք, ասում եր ընկեր Ստալինը,—պետության մահացման կողմնակից ենք: Յեւ մենք զրա հետ միասին կոմունիզմից ենք ուժեղացնելու պրոլետարիատի դիկաստուրան, վորը մինչև այժմ գոյություն ունիցող պետական իշխանություններից ամենակարողն ու ամենահզորն է: Պետական իշխանության բարձրագույն զարգացում պետական իշխանության մահացման համար պայքաններ նախարարաստելու նպատակով—ահա մարդուստական փորձության»: Խմբ:

միջոցներ ու պրոդուկտներ ե խնայում այժմ իշխող գասակարգերի և նրանց քաղաքական ներկայացուցիչների խելազար շայլությունը վերացնելու միջոցով: Հասարակության բոլոր անդամների գոյության լիովին բավարար և յուրաքանչյուր որ բարելավգով նյութական պայմանները, ինչպես նաև նրանց Փիզիկական ու մտավոր ընդունակությունների լրիվ զարգացումն ու ոգտագործումը հանրային արտադրության միջոցով ապահովելու հարաբեկություն առաջին գործություն է ձեռք բերվում, բայց նա ինկապես ձեռք է բերվում:

Արտադրության միջոցները դրավելու հետ միասին հասարակությունը վերացնում է ապրանքային արտադրությունը, իսկ դրա հետ միասին պրոդուկտների տիրապետությունը արտադրողների վրա: Հանրային արտադրության անարխիան փոխարինվում է արտադրության կազմակերպումով ըստ նախամտածված պլանի: Դադարում է դոյցության անհատական կոլիվը: Այդպիսով մարդը վերջնականապես վորոշ խմասով ջոկվում է կենդանիների աշխարհից և դոյցության պայմաններից անցնում է իսկական մարդական մարդկանի վրա: Մարդկանց շրջապատող և մինչև այժմ նրանց վրա իշխող կենսական պայմանները ընկնում են մարդկանց իշխանության ու վերահսկողության տակ, վորոնք առաջին անդամ դառնում են բնության իսկական և գիտակցական իշխողներն այն չափով, վորչափով նրանք իրենց սեփական հասարակական հարաբերությունների տերն են զառնում: Նրանց սեփական հասարակական դորոգությունների որենքները, վորոնք մինչև այժմ կանդիմած եյին մարդկանց դեմ վորպես ոտար, նրանց վրա իշխող՝ բնության որենքներ, լիովին դիտակցաբար

1 Միքանի թվեր կարող են մոտավոր պատկերացում տալ արտադրության արդի միջոցների ընդունակման աներեկակայելի ընդունակության մասին հույն-իսկ կապիտալիստական հնչման տակ: Գիֆֆենի նորագույն հաշիվներով՝ Մեծ-Բրիտանիայի և Իռլանդիայի բոլոր հարստությունների ընդհանուր գումարը կլոր կազմում էր—

1814 թ. 2.200 միլ. ֆունտ առերկնդ, կամ 22 միլիարդ սուրբի

1865 » 6.100 » » » 61 » »

1875 » 8.500 » » » 85 » »

իսկ ինչ վերաբերում է արտադրության միջոցների և պրոդուկտների վերացմանը ճգնաժամերի միջոցին, աղա գերմանական արդյունաբերողների յերկրորդ կոնցերնում (1878 թ. գետրավը 21-ին Բևոլինսլ) պարզվեց, վարչական միայն գերմանական յերկարի արդյունաբերության ընդհանուր կորուսության բարձրագույն զարգացում պետական իշխանության մահացման համար պայքաններ նախարարաստելու նպատակով—ահա մարդուստական փորձության»:

կիրառվում են նրանց կողմից և, հետեալես, յենթարկվում են նրանց տիրապետությանը։ Հասարակական կեցությունը, վորամինչեւ այժմ մարդկանց թվում եր վորպես ի վերուստ բնությունից ու պատմությունից տրված մի տեսակ պարզե, դառնում են նրանց սեփական, աղաս գործը։ Պատմության վրա իշխող որյակախը, խորհրդավոր ուժերը իր իսկ՝ մարդու վերահսկողության տակ են անցնում։ Յեվ միայն այդ մոմենտից մարդիկ իրենք կակսեն միանդամայն դիտակցորեն կերտել իրենց պատմությունը, միայն այդ ժամանակ նրանց կողմից շարժման մեջ դրվող հասարակական պատճառները զգալի և շարունակ աճող չափով շանկալի ներդրություն կունենան։ Յեվ այդ կլինի մարդկության թոփչքն անհրաժեշտության թաղավորությունից գեղի պատության թաղավորությունը։

Վորպես յեղափակում տանք զարգացման մեր շարադրած ընթացքի հանրապում արը . . .

I. Միջնադարյան հասարակություն: Մանր անհատական արժադրություն: Արտադրության միջոցները հատկացված են անհատական սպառման համար և այդ պատճառով ել, բնականաբար, անդյուրաշարժ են, մանր և չնշին գործողությամբ: Արտադրությունը պրոցեսական երի անմիջական սպառման համար ե հենց իր՝ արտադրողի կամ ֆեոդալ տիրոջ կողմից: Միայն այնտեղ, վորտեղ անմիջական սպառումից ամելցուկ ե մնում, այդ ավելցուկը վաճառքի և փոխանակության և հանվում: Հետեւապես, ապրանքային արտադրությունը սաղմնային վիճակում ե. բայց նա այդ ժամանակ ել իր մեջ հանրային արտադրության անարխիայի սաղմեր և պարունակում:

Ա. Կապիտալիստական հեղափոխություն։ Հեղաշրջում արդյունաբերության մեջ, վոր կատարվել է սկզբում պարզ կոստերացիայի ու մանուֆակտուրայի միջոցով։ Արտադրության մինչև այժմը ցըլած միջոցների համակենարոնացում մեծ արհեստանոցներում և այդ ճանապարհով նրանց փոխակերպումն առանձին անձերի արտադրության միջոցներից հանրային միջոցների, ընդհանրապես ասած՝ փոխակերպում, վոր չի շոշափել յուրացման ձևը։ Յուրացման հին ձևերն իրենց լիակատար ուժի մեջ են մնում։ Կապիտալիստի յերեան գալը. վորպես արտադրության միջոցների սեփականատեր նա յուրացնում է նաև պրոդուկտները և դրանք ապրանք և գարձնում։ Արտադրությունը հանրային գործ ե դառնում։ իսկ փոխանակությունը, իսկ նրա հետ նաև պրոդուկտները

ա) Արտադրողի անջատումը արտադրության միջոցներից :
Բանվորի դատապարտումը ցմահ վարձու աշխատանքի : Հակա-
ռական առևտունության և բուրժուազիայի միջև :

բ) Ապրանքային արտադրության վրա իշխող որենքների աճող կշռն ու ուժեղացող ազգեցությունը: Անսանձ մրցություն: Հակասություն յուրաքանչյուր առանձին գործարանում յեղած հասրակական կազմակերպության և ամբողջ արտադրության մեջ յեղած հասարակական անարխիայի միջև:

գ) Մի կողմից՝ մեքենաների կատարելադրծում, վոր մըրց-
ման չորհիվ զարձել և հարկադիր որենք յուրաքանչյուր առան-
ձին դործարանատիրոջ համար և միաժամանակ նշանակում է
բանվորների շարունակ ուժեղացող արտամում դործարաններից.
արդյունաբերության պահեստի բանակի առաջցումը: Մյուս կող-
մից՝ արտադրության անսահման ընդարձակում, վորը նույնպես
դարձավ մրցության հարկադիր որենք ամեն մի դործարանատի-
րոջ համար: Յերկու կողմից ելարտադրողական ուժերի շափած
գարգացում, առաջարկի գերակշռումը պահանջարկի դիմաց,
դերաբարակություն, շուկաների գերլցում, յուրաքանչյուր տառ
ասարին մեկ անդամ կրկնվող ճնշաժամեր, կախարդական շրջան.
մի կողմից՝ արտադրության միջոցների ու պրոդուկտների ավել-
ցուկ, մյուս կողմից՝ գրադմունիքներից գորկ և գյուրթյան մի-
ջոցներից գորկ բանվորների ավելցուկ: Բայց արտադրության և
հասարակական բարեկեցության այդ յերկու լծակներն ել չեն կա-
րող միանալ, վորովհետև արտադրության կապիտալիստական
ձեզ թույլ չեն տալիս արտադրողական ուժերին դորձել, իսկ որո-
գուկտներին շարժվել այլ կերպ, բայց յեթե նախապես կապիտա-
լի վերածվելու պայմանով, վորին արգելք ել լինում չենց նրանց
ամենավայրէնը: Այդ հակասությունն աճում-անհեթեթության և հաս-
ամելցուկը: Այդպիսով, մերկացվում ե բուրժուագիայի անընդու-
մեկ դեմ: Այդպիսով, մերկացվում է բուրժուագիայի անընդու-
մեկ դեմ:

Դ) Արտադրողական ուժերի հանրային բնույթի ժամանակի ընդունումը, վորին հարկադրվում են իրենք կազմակերպ։ Արտադրության և հաղորդակցության խոչոր որդանիվմները դառնում են—ակզրում բաժնետիրական ընկերությունների, հետագայում տրեսաների, իսկ հետո նաև սինտուքյան սեփականություն։ Բուրժուազիան գառնում է ավելորդ դասակարգ։ Նրա ամբողջ հասարակական ֆունկցիաներն այժմ վարձուծառայող երն են կատարում։

III. Պրոլետարական հեղափոխություն։ Հակասությունների լուծումը, պրոլետարիատը գրավում և հասարակական իշխանությունը և այդ իշխանության սպնությամբ արտադրության բուրժուազիայի ձեռքից դուրս յեկող հանրային միջոցները դարձնում և հանրային սեփականություն։ Դրանով պրոլետարիատը արտադրողական ուժերն ազատում և նրանց մինչև այդ դոյլություն ունեցող կապիտալի հատկություններից և դարձացման վակատար ազատությունն ետալիս նրանց հանրային բնույթին։ Արակիով, հնարավոր և գառնում հանրային արտադրությունն ըստ նախամտածված պլանի։ Արտադրության զարգացումն անախառնիզմ և զարձնում տարրեր դասակարգերի հետագա գոյությունը։ Նույն չափով, ինչ չափով անհետանում և հանրային արտադրության անարխիան, մարում և նաև պետության քաղաքական հեղինակությունը։ Մարդիկ, վերջապես իրենց սեփական հասարակական կեցության տերը գառնալով, դրա հետևանքով դառնում են բնույթյան տերը, իրենք իրենց տերը—ազատ։

Աշխարհն ազատագրող այդ սիրազարծությունը կատարել—ահա արդի պրոլետարիատի պատմական կոչումը։ Հետազոտել այդ հեղաշրջման պատմական պայմանները և բուն իսկ եյությունը և այլպիսով պարզել այդ հեղաշրջումը կատարելու կոչված, այժմ ճնշված դասակարգի համար նրա սեփական գործի պայմաններն ու բնույթը, —ահա գիտական սոցիալիզմի խնդիրը, վորովիտարական չափման թեորիական արտահայտությունն է։

ԲՈՂԱԺԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1882 թվի ուրիշներեն առաջին հրատարակություն առաջաւանը	3
1892 թվի անդիւրեն հրատարակության ներածությունը	7
Սոցիալիզմի զարգացումը ուսուվիայից դեպի գիտաւթյուն	11



Թարգմ. Գ. Փաթյուհի

Խմբագիր Հ. Ավանեսյան

Տեխն. խմբ. Ս. Խաչառյան

Մրգագրիչ Ա. Մանուկյան

Կոնտրոլ պրադելիչ Յ. Տ.-Մինասյան

Պլազմիա լիազոր № վ. 1083, հրատ. № 769

Պատվեր № 287, տիրած 10.000

Հանձնվել և արտադրության 22 ՎԻ 1939 թ.

Սառարարվել և տպագրելու 15/1 1940 թ.

Դիմք 83 կ. կաղմը՝ կալենկորից 1 ս. 15 կ., հասարակը՝ 65 կ.

Թաղաքական գրականության պետական հրատարակչության տպաքան,

Երևան, Ազգահկեդեյյան № 65

«Ազգային գրադարան



NL0173196

ԳԻՒՅ 1 թ. 50 հ.

Ф. ЭНГЕЛЬС

РАЗВИТИЕ СОЦИАЛИЗМА
ОТ УТОЧНИК К НАУКЕ

Государственное издательство политической литературы
Ереван • 1940